№ 111 ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21

1907

ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21 № 111

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak"
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ.
ՄՇԱԿ
ԼՐԱԳԻՐԸ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ ԱՐԺԷ
ԵՐԵՔ րուբլի
Մի ամսվայ համար 1 րուբլի

Հանգուցեալ Զաքարիա Ջանփօլադեանի այրին՝ Թագուհի Բունիաթեան Ջանփօլադեան իր զաւակներով յայտնում է ի գիտութիւն ազգականների, ծանօթների, բարեկամների և հանգուցեալի յիշատակը յարգողների, որ ամսիս 22-ին Կաղզւանում, հայոց եկեղեցում կատարվելու է մահվան տարեդարձի առիթով պատարագ և հոգեհանգիստ։ (ու. շ.) 1—2

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ
Պետերբուրգի Կայսերական Գեղարուեստական ճեմարանի վկայագրով
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-ԻՑ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԲԱՑՎՈՒՄ ԵՆ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ

Աւանդվելիք առարկաներն են՝ Նկարչութիւն (սև, ջրաներկ և իւղանկար), գծագրութիւն, գեղագրութիւն (հայ և օտար լեզուներով), ձեռարուեստ, փորագրութիւն (փայտի և պղնձի վրա), քանդակագործութիւն, շքեղ ձեռագործ, հեռանկար (պերսպեկտիվա), գոյների և ստուերների տեսութիւն։ Դասաւանդութեան համար առայժմ հրաւիրվում են նկարիչներ՝ պ. Յար. Շամշինեան, պ. Արշ. Ֆեթվաճեան և տիկ. Ֆլորա Ստեփանեան-Պալասանեան շքեղ ձեռագործի դասերին։

Պարապմունքները լինելու են երեկոները՝ օրական 2—3 ժամ։ Տարեկան վճարն է 40 րուբլի կամ ամսական 5 ր., դպրոցականների համար 25 ր. և 3 ր.։

Յաճախել ցանկացողները թող բարեհաճեն այժմեանից յայտնել այդ մասին կուրսերի հիմնադրին, որից և կարելի է ստանալ աւելի մանրամասն տեղեկութիւններ անձնական տեսակցութեան համար ամեն օր, երեկոյեան 4—6. ժամանակաւոր հասցէն՝ Бебутовская ул № 12. Յովնանեան դպրոցի մօտ, 3-րդ պօդեզդ։
(չ. ու. կ.) (ա. ե.) 2—3

Մանկական պարտէզ և դպրոց
մանկական պարտիզպանուհի
Վ. Ս. Զմշկեանի
Վելիկօկնեաժեսկի փող. տուն № 71.
Ընդունելութիւնը շարունակվում է։
(առ.) 7—10

ԲԺԻՇԿ
Ա. Միխիթարեանց
Վերադառնալով կովկասեան հանքային ջրերից՝ վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 1—3 ժ., երեկ. 6—8 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33։
առ. (ա. օ.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հերթական մեծ հոգս. Վերջին տեղեկութիւններ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Կովկասագիտական կուրսերից. Ընտրութիւնները Կովկասում. Կուսակցութիւնների կեանքից. Մի կարևոր որոշում։ Մի կարևոր ծանօթութիւն։ Բագուի արդիւնաբերական կեանքը. Թատրոն և երաժշտութիւն. Մի նոր նուիրատուութիւն. Յօգուտ Կովկասի հայ աղէտեալների. Յօգուտ Թիւրքահայ սովեալների. Տեղեկութիւններ գաւառից. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. Ռուսաստանի կեանքից. Նամակ խմբագրութեան. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Պապի մի նոր էնցիկլիկան. Անգլօ-ռուսական դաշնադիրը Պարսկաստանի մասին. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԵՐԹԱԿԱՆ ՄԻ ՄԵԾ ՀՈԳՍ

I

—Ի՞նչ դրութեան մէջ է երկիրը։ Ապահո՞վ է արդեօք ազգաբնակութիւնը իր ապրուստի միջոցների վերաբերութեամբ։

Ահա այն հարցը, որ տալիս է իրան ամեն մի հասարակութիւն. ահա այն հարցը, որ տալիս է իրան և հասարակական օրգանը, որ կոչված է արտայայտելու ժողովրդի կարիքները, ցաւն ու հոգսերը։

«Մշակի» ընդհատումը թոյլ չը տուեց, որ մենք մեր հասարակութեանը իրազեկ պահենք իր երկրի, իր ժողովրդի դրութեան մասին։

Իսկ հանգամանքները լուրջ էին, ժամանակը պատասխանատու և կրիտիքական էր։ Հասարակութիւնը ամբողջ ամիսներ և նոյն իսկ մօտ 2 տարի լարված ուշադրութեամբ հետևում էր աւերված տեղերի վերականգման և քայքայված տնտեսութիւնների վերակազդուրման գործին։

Եւ, անկասկած, եթէ գիւղատնտեսութեան վրա ազդող պայմանները նպաստաւոր լինէին և մեր երկիրը ստացած լինէր առատ բերք, մեր ջանքերը պսակված կը լինէին և աղէտեալ ժողովուրդը մի որոշ աստիճան կազդուրած կը լինէր իր կենցաղավարութիւնը։

Սակայն ի՞նչ են ասում մեր իրականութեան փաստերը։

II

Մի շարք յօդուածներում, որ մենք զետեղեցինք «Մշակի» մի քանի համարներում «Տարվայ քմահաճոյքը» վերնագրով, մենք հաղորդեցինք մեր ընթերցողներին տեղեկութիւններ այն պատահարների մասին, որոնց ենթարկվեց մեր գիւղական աշխարհը և որոնց շնորհիւ փչացան արտեր, այգիներ, բանջարանոցներ և քայքայվեց գիւղական տնտեսութիւնը։

Մենք մեր տեղեկութիւնները ժողովել էինք թէ ականատեսներից, թէ թղթակցութիւններից, թէ պաշտօնական հաղորդագրութիւններից, թէ լրագրական աղբիւրներից և թէ սեփական դիտողութիւններից։

Ընդհանուր պատկերը անմխիթարական է։

Ընդարձակ տարածութիւններ վնասվել են այս կամ այն ձախորդ ազդեցութիւնից, և վերջ ի վերջոյ մեր առաջ դրված են ամբողջ շրջաններ, որոնք այժմեանից իսկ կարօտութեան մէջ են և չունեն պաշարներ տան ապրուստի համար, չունեն սերմացու արտերը ցանելու համար։

III

Համեմատաբար ամենից վատ վիճակի մէջ է գտնվում Գանձակի նահանգը։

Փոքր ի շատէ բաւարար հունձ ունեցել են այդ նահանգում ջրովի տեղերի բնակիչները, իսկ այնուհետև միւս տարածութիւնները, անջրդի հողերը երաշտի պատճառով բոլորովին զրկվել են հացից։ Միայն բարձրադիր տեղերում, ուր երաշտի քայքայող ազդեցութիւնը թոյլ է եղել, արտերը տուել են մի որոշ չափով հունձ։

Ղազախի, Գանձակի, Ջիվանշիրի, Շուշու, Զանգեզուրի, մասամբ Նուխու գաւառները ծանր օրերի մէջ են, զրկվել են հացից, զրկվել են շատ տեղ նաև խոտից և ուրեմն չունեն կերակուր ոչ իրանց համար, ոչ տնային անասունների համար։

Հացահատիկը թանգացել է և ցորենի գինը Շուշում և Զանգեզուրում բարձրացել է մինչև 1 ր. 50 կ. և նոյն իսկ 2 րուբլի ամեն մի փութը։

IV

Միւս նահանգներն էլ ընդհանրապէս աննպաստ վիճակի մէջ են։ Բերքը ընդհանրապէս եղել է միջակից ցածր, իսկ շատ տեղերում բոլորովին փչացել է։ Այն տեղերը, ուր հունձը ստացվել է միջակ, կազմում են փոքրամասնութիւն, իսկ միջակից բարձրը՝ համարվում է բացառութիւն։ Համեմատաբար աւելի բաւարար դրութեան մէջ է Երևանեան նահանգը, որը նոյնպէս ունի կարօտեալ տեղեր, բայց քիչ քանակութեամբ։

Եւ զարմանալի չէ, որ հացի գինը ոչ միայն չէ իջել, այլ և բարձրացել է զգալի աստիճան մեր բոլոր շուկաներում։

Սակայն այստեղ դեր է կատարում և մի աւելի խոշոր ազդեցութիւն, այն է Ռուսաստանի այնպիսի խոշոր վաճառանոցների ցուցումները, ինչպէս են Օդեսսան, Նովօրօսիյսկը և ուրիշները։

Այնտեղ ցորենի գինը բարձրացել է, որովհետև համաշխարհային շուկայում հացի մեծ պակասութիւն է զգացվում Ամերիկայի և ուրիշ երկիրների վատ հունձերի պատճառով։

V

Թէ պետութիւնը վարչական իր մարմիններով և թէ հասարակութիւնը իր հիմնարկութիւններով պէտք է շատ լուրջ ուշադրութիւն ընծայեն հացի մատակարարութեան խնդրին և դարձնեն ամենամեծ հերթական խնդիրներից մէկը։

Անհրաժեշտ է հոգ տանել, որ երկրի իւրաքանչիւր մասում լինեն հացի պաշարներ՝ հայթայթելու ժողովրդին, և առաջն առնված լինի հացի գնի արհեստական բարձրացումների։ Արդէն այժմ մենք տեսնում ենք այդ արհեստական բարձրացումները։ Այնտեղ, ուր կան մեծ շտեմարաններ լի հացահատիկների պաշարներով, որոնք դեռ ամբողջ ամիսներ կարող են կերակրել ժողովրդին, բարձրացված են արհեստական կերպով հացի գները, և ազգաբնակութիւնը դրված է դժուար կացութեան մէջ։

Հասարակութիւնը պարտաւոր է զբաղվել հացի մատակարարութեան հարցով։ Պէտք է հացի պաշարներ ունենալ գները իջեցնելու նպատակով։

Թող հասարակութիւնը և մամուլը զբաղվեն այդ հարցով։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Վաղարշապատ, 17 սեպտեմբ.։ Երէկ, սեպտ. 16-ին ս. Գայիանէի վանքում, Սաքսոնիայի արքայազն աբբատ Մօրիցը պատարագ մատուցեց (լուռ), իսկ 14-ին մատուցել է ս. Էջմիածնի տաճարում։ Հիւրասիրվում էր Կաթողիկոսի վեհարանում։

—

Օդեսսա, 19 սեպտ.։ Օդեսսայից դուրս եկած ճանապարհորդական գնացքը երեկոյեան ժամը 9-ին 14-դ վերստի վրա ենթարկվել է մօտ 15 զինված մարդկանց յարձակման։ Գծի վրա կապելով պահապանի ձեռքերը, չարագործները նշան են տալիս գնացքին կանգնել։ Գնացքը կանգնում է. չարագործները անմիջապէս ձերբակալում են մեքենավարին, իսկ յետոյ երկու կողմից սկսում են կրակել գնացքի վրա՝ ճանապարհորդներին սարսափահար անելու նպատակով։ Հրացանաձգութեան ժամանակ ծանր վիրաւորվում է ճանապարհորդներից մէկը և երկու ժանդարմ՝ թեթև կերպով։ Ուժանակի օգնութեամբ չարագործները պայթեցնում են փոստի արկղը, բայց նրա մէջ բացի դօկումենտներից ոչինչ չեն գտնում։ Ապրանքների բաժնում հրդեհ է ծագում, որից այրվում է ապրանքների վագօնը և երկրորդ կարգի վագօնի կէսը։ Խուզարկելով ապրանքների վագօնը, կողոպտիչները նստում են շոգեմեքենայի վրա և հեռանում են, թողնելով գնացքը անօգնական վիճակի մէջ։ («Հ. Գ.»)

—

Օդեսսա, 20 սեպտեմբերի։ Ճանապարհորդական գնացքի վրա կատարված յարձակման մանրամասնութիւնները։ Գնացքում կային մօտ 200 ճանապարհորդներ, որոնց թւում նաև շատ կանայք։ Երբ գնացքը կանգ առաւ, կողոպտիչներից երեքը թռան շոգեմեքենայի վրա, միւսները ցրվեցին վագօնների մէջ, նախազգուշացնելով ճանապարհորդներին դուրս չը նայել պատուհաններից, իսկ մնացած չարագործներն սկսեցին կրակել գնացքի վրա. կրակեցին 200-ից աւելի անգամ։ Ժանդարմը և ճանապարհորդներից մի քանիսը սկսեցին իրանց հերթին կրակել։ Գնացքի կանգնելու րոպէին հինգ հոգի յանկարծ դուրս թռան երրորդ կարգից և միացան յարձակվողներին։ Ժանդարմական ունտէր-օֆիցէր Կավէրշինը անմիջապէս կրակեց մի քանի անգամ չարագործների վրա։ Կարծում են, որ նրանցից մէկը սպանվեց, որին տարան ընկերները իրանց հետ։ Կողոպտիչները, շրջապատելով Կավէրշինին, սկսեցին կրակել նրա վրա մօտ 20 անգամ և մահացու կերպով վիրաւորեցին նրան 8 գնդակներով։ Վիրաւորեցին նաև ապրանքներ յանձնողին և երկրորդ կարգի ճանապարհորդ վաճառական Սօլօմէյչիկին, որը վիրաւորեց աւազակներից մէկին։

Կողոպտիչները ապրանքատար վագօնի կողքի վագօնում եղողներին հրամայեցին իջնել, քաշելով ապրանքատար վագօնի տակ մի արկղ, որը չը կարողացան կոտրել։ Այն ժամանակ երկու ուժանակի փամփուշտներով պայթեցրին նրան. սկսվեց հրդեհ։ Բացի չորս իրեղէններից, ամբողջ ապրանքը և պօստը այրվեցին։ Արկղում կային 4,900 րուբլու պետական բանկի Օդեսսայի գրասենեակի ստացագիրներ և 100,000 րուբլու անդորրագրեր։ Կողոպտիչները ստիպեցին մեքենավարին շոգեմեքենայով գալ իրանց հետ երեք վերստ տարածութիւն, ապա, հրամայելով տեղից չը շարժվել մի քանի րոպէ շարունակ, անյայտացան դաշտի մէջ։

Յարձակումը տևեց 8 րոպէ։ Մեքենավարը շոգենաւով գնաց մօտակայ կայարանը և հեռախօսով յայտնեց եղելութեան մասին։ Վնասված գնացքը ճանապարհորդներով վերադարձաւ Օդեսսա։ Նոր գնացքը Կիեվ գնաց շատ ուշացած։

Անմիջապէս ուղարկվեցին կօզակներ և հեծեալ պահակներ՝ չարագործներին որոնելու համար։ Ճանապարհին կանգնած վագօնները այրվել են մի քանի ժամ շարունակ։ («Հ. Գ.»)

—

Օդեսսա, 20 սեպտ.։ Վերջին տեղեկութիւնների համաձայն, այրված ապրանքի վագօնում 28 ծրար հասարակ և ապահովագրած նամակներից կրակից զերծ էր մնացել միայն մէկը, որ Օդեսսայից հասցէագրած էր Վինիցա։ Կասսան ամբողջ է, միայն մի փոքր այրվել է։ Նրա մէջ կար 7000 րուբլու թղթադրամներ։ Երկաթուղային դօկումենտները և թղթերը բոլորը այրվել են։ Այդ գնացքի հետ մտադրութիւն կար Կիեվ ուղարկել 200.000 րուբլի, բայց յետոյ պայմանները փոխվեցին։

Օդեսսայի շրջակայքում ձերբակալել են յարձակման մէջ կասկածվող 6 անձնաւորութիւններ։ Ժանդարմական ունտէր-օֆիցէր Կավէրշինը վախճանվեց։ («Հ. Գ.»)

—

Գանձակ, 19 սեպտեմբերի։ Քաղաքագլուխ կրկին ընտրվեց Ասկէր Աղիգէօզալօվ, վարչութեան անդամներ՝ Իսրաֆիլբէգօվ և Ավշարօվ, քարտուղար՝ Բախշալիբէգօվը։

—

Պետերբուրգ, 20 սեպտ.։ Յայտարարվեց գինւորական կազմակերպութեան գործի դատավճիռը։ Լեռնային ինժեներ Մալօզէմօվը դատապարտվել է 8-ամեայ աքսորի. 15 հոգի դատապարտվել են աքսորի զանազան ժամանակներով, 4-ը—եօթ տարով. 16 հոգի արդար են ճանաչվել։ («Հ. Գ.»)

—

Վարշավա, 20 սեպտ.։ Վագոլնի փողոցում ոստիկանութիւնը գտաւ լեհական սօցիալիստների կուսակցութեան յեղափոխական ֆրակցիայի բիւրօն։ Գրաւված են 30 անցագրի բլանկներ, 21 պետական կնիքներ, անլէգալ գրուածքներ և կուսակցական գրութիւններ։ («Հ. Գ.»)

—

Վարշավա, 20 սեպտ.։ Բունդի տասնամեակի առիթով Վարշավայի բունդիստները համերգի պատրուակով ժողով գումարեցին։ Պահնորդական բաժինը, տեղեկանալով այդ մասին, մտաւ ժողով և ձերբակալեց կուսակցութեան զանազան մարմինների 69 ներկայացուցիչներին։ («Հ. Գ.»)

—

Սէվաստօպօլ։ Գրեչինսկի փողոցում, Իվանօվի տանը, գիւղացի Բօգիբեվ բրաունինգով ծանր վիրաւորեց նրա անցաթուղթը ստուգելու եկած թաղական վերակացուին։ Բօգիբեվը ձերբակալվեց։ Նրա բնակարանում գտնվեցին 11 պատրաստի ռումբեր, մի քանի ատրճանակներ և պայթուցիկ նիւթեր։ («Հ. Գ.»)

—

Թէհրան, 20 սեպտ.։ 57 պրինցներ և ազնուականներ մէջլիսի առաջ երդուեցին հաւատարիմ մնալ սահմանադրութեան։ («Հ. Գ.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻՑ

—

Չորեքշաբթի, ամսիս 19-ին, պ. Բ. Խալաթեանցը վերջացրեց իր դասախօսութիւնների շարքը, որ վերաբերում էր հայկական պատմութեան հնագոյն շրջանին։ Ամբողջացրած կուրսը, մեր կարծիքով, պսակեց դասախօսի մեթօդը՝ համեմատական ուղղութիւնը, որ ամենուրեք տուել է բեղմնաւոր հետևանքներ։ Եւ մեր պատմութեան հնագոյն շրջանը, որ թողել է շատ քիչ կոնկրետ ապացոյցներ, միայն կարելի է լուսաբանել հարևան ազգերի մշակած պատմութիւնով… «Ի հարկէ, մեր հաղորդածը,—ասաց իր վերջաբանում դասախօսը,—քիչ է այս շրջանի վերաբերեալ. նա կարօտ է շօշափելի փաստերի, որ միայն կարող են տալ հնագիտական պեղումները, արձանագրութիւնները և գիտնականների ուսումնասիրութիւնը։ Ահա ինչու պիտի ցանկալ կովկասեան համալսարանի և առաւել նրա պատմական-լեզուաբանական բաժնի շուտափոյթ բացումը»։

Վերջին դասախօսութեան նիւթն էր Արա Գեղեցկի և Շամիրամի աւանդութեան քննութիւնը, նոյն համեմատական ձևով, որ գործադրեց նախորդ Հայկազնի աւանդութիւնը քննելիս։ Տիգրան մեծի պատմութիւնը ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ միդիական աւանդութեան հայկական կերպարանափոխումն, գուցէ Գողթան գուսանաց՝ Միդիայի այդ հարևան երկրում։ Արտաւազդի պատմութիւնը—ժողովրդական աւանդութեան արգասիք, որ կարելի է շօշափել բոլոր հին ազգերի միֆերի մէջ: Այդպիսով Մովսէս Խորենացու պատմութիւնը մինչև Արշակունիների հարստութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ժողովրդական աւանդութիւնների և ոչ պատմական րէալ (գոյութիւն ունեցող) անձնաւորութիւնների նկարագրութիւն: Դա բանաստեղծական արգասիք է ժողովրդական երգիչների պօէտական տաղանդի: Իսկ ինչ որ մենք գիտենք այժմս մեր պատմական անցեալից՝ դա այն արձանագրութիւն—աննալներն են, որ թողել են ասորա-բաբելոնական և ուրարտական թագաւորները, իբրև յիշատակ իրանց յաղթութիւնների և կատարածների:

Նոր կուրսերում, սեպտեմբերի 18-ին, գիտնական ասպարէզի համար պատրաստվող իշխ. Ջավախովը կարդաց մի շատ հետաքրքիր և բովանդակալից դասախօսութիւն—կովկասեան ազգերի՝ հայերի և վրացիների ֆիզիքական տիպի որոշման հարցին նուիրված: Այդ տիպի հայրենիքը նա գտնում է Փոքր-Ասիայում՝ հիմք ունենալով այն գիտնական արշաւանքի հետազօտութիւնները, որ ղեկավարել է Լուշան գիտնականը: Այդ տիպը՝ բարձր, կարճագլուխ, նեղայտոսկր, նեղ-երես կանգը, միանգամայն զարտուղի արիական, մոնգոլական և այլ տիպերից: Այս տիպը միայն պահվել է միջին Եւրոպայում՝ Ալպերի շրջանում:

Ի հարկէ դժուար է, որ և է դրական եզրակացութիւն անել մինչև այդ հարցի մասին փաստալից գիտնական հետազօտութիւն երևալը, որ պատրաստում է դասախօսը: Այս դասախօսութիւնը առաւել ևս համոզեց, թէ որքան կարևոր է գիտնական առարկաների սիստեմատիքական աւանդութիւնը մեզանում, երբ արդէն որոշվում է, թէ պատկառելի թւով ունկնդիրներ կան՝ ծարաւ գիտութեան: Լսարանում գտնված հարիւրից աւելի հասարակութիւնից հազիւ չնչին տոկոսը կարող էր հետևել դասախօսութեանը, որ ենթադրում էր գիտական պաշար անտրոպօլօգիայից, էտնօլօգիայից... Դա նկատելի էր և մեր շուրջ լսվող խօսակցութիւններից և դասախօսին ուղղած հարցմունքներից:

Պ. Զ.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

◆ Թիֆլիսի նահանգապետը յայտնել է Թիֆլիսի գաւառական մասնաժողովին, որ ժողոված տեղեկութիւնների համաձայն, Թիֆլիս քաղաքի ու Թիֆլիսի գաւառի ռուսաց կուրիայի քաղաքային ընտրողների թւում կան այնպիսի անձինք, որոնց անունները պէտք է հանել ընտրողների ցուցակից, այսինքն 5 օտարազգիներ, 1 մեռած, 1 հեռացած Կովկասից և 10 հռոմէա-կաթօլիկ դաւանութեան պատկանողներ: Հաղորդելով յիշեալ անձնաւորութիւնների անունները, նահանգապետը մասնաժողովի նախագահից խնդրում է, Պետական Դումայի ընտրութիւնների կանօնագրքի 24-րդ յօդուածի հիման վրա, հանել այդ մարդկանց անունները ընտրողական ցուցակից: Հռոմէա-կաթօլիկ դաւանութեան պատկանողները պէտք է մտնեն ընդհանուր տեղական կուրիայի ընտրողական ցուցակի մէջ:

◆ Բօրչալուի գաւառում, Ալլահվերդի պղնձաձուլական գործարանում սեպտ. 14-ին բանւորները լիազօր են ընտրել Տագանրօգի բնակիչ Վ. Ն. Շէվչէնկօին՝ Պետական Դումայի պատուիրակների ընտրութեանը մասնակցելու համար:

◆ Շահալու պղնձաձուլական գործարանի և նրա հանքերի բանւորները լիազօր են ընտրել Բօրչալուի գաւառի Դսեղ գիւղացի Վահան Տէր-Մաթէվոսեան Թումանեանցին:

◆ Շաբաթ, սեպտեմբերի 22-ին, Զուբալովի անունով հիմնված տան մէջ կայանալու է գեներալ-նահանգապետից թոյլատրված ռուսաց ընտրողների նախընտրական ժողովը:

◆ Քաղաքային վարչութիւնը 6, 7, և 8-րդ ոստիկանատներին ուղարկել է պատրաստի ընտրողական բիւլլէտէնները 3-րդ քաղաքաբաժնի համար:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ «Р. В.» լրագիրը հաղորդում է, որ սահմանադիր-ռամկավարների կուսակցութեան կենտրօնական կօմիտէտի վերջին նիստում տեղի է ունեցել ագրարական մասնաժողովի նախագահի ընտրութիւնը հանգուցեալ Ա. Ա. Մուխսովի փոխարէն: Կօմիտէտը միաձայն ընտրել է Ի. Ի. Պետրունկևիչին, որը ներկայումս գտնվում է արտասահմանում, բայց շուտով պէտք է վերադառնայ Պետերբուրգ:

◆ Այժմ արդէն պարզված է, որ սահմանադիր-ռամկավարների կուսակցութեան համակայսերական ժողովը կը գումարվի ընտրութիւնները վերջանալուց յետոյ, հոկտեմբերի վերջերին:

◆ Պետերբուրգում մօտ ժամանակներս կազմակերպվել է գերմանական պրօգրեսիվ ընտրողների մի խմբակ, որը կանգնած է հոկտեմբերեաններից դէպի ձախ:

◆ Պրօֆեսիօնալ միութիւնների կենտրօնական բիւրօյի գործունէութիւնը, «Торгово-Промышл. Газета»-ի ասելով, վերջին ժամանակներս բոլորովին մեռելութեան է մատնված: Ամբողջ երկու ամսվայ ընթացքում չէ կայացել ոչ մի ընդհանուր ժողով շնորհիւ նրա, որ ներկայացուցիչների բաւարար թիւ չէ հաւաքվել: Անդամավճարներ համարեա չեն ստացվում միութիւններից: Ուշադրաւ է նկատել, որ դէպի կենտրօնական բիւրօն առանձին անտարբերութիւն են ցոյց տալիս այնպիսի խոշոր և կենսունակ միութիւններն անգամ, ինչպիսին է մետաղեղէնի և տպարանական բանւորները:

◆ «Бирж. Вѣд.» լրագրի ասելով, իրաւակարգի կուսակցութիւնը վճռել է իր գործունէութեանը վերջ տալ և նոյնիսկ ընտրութիւններին չի էլ մասնակցի որևէ ուրիշ կուսակցութեան դրօշակի ներքոյ: Նրա անդամների մի մասը ձգտում է կազմակերպել անկուսակցականների մի նոր խմբակ, սակայն նշաններից երևում է, որ նրանց այդ ջանքերն էլ ապարդիւն պիտի անցնեն:

◆ Մօտ երկու շաբաթ սրանից առաջ, «Часъ» լրագրի ասելով, ներքին գործերի մինիստրութիւնը վճռել էր եռանդուն միջոցներ ձեռք առնել ռուս ժողովրդի դաշնակցութեան մարտական խմբերի դէմ, և այդ առիթով բժիշկ Դուբրովինի միջոցով հարցապնդում արեց՝ թէ ինչ նպատակով են պահվում այդ մարտական խմբերը: Դաշնակցութեան գլխաւոր խորհուրդը, նախնական խորհրդակցութիւնից յետոյ, որոշել էր անուշադիր թողնել հարցապնդումը, սակայն քիչ ժամանակից յետոյ գաւառական բաժանմունքներից գանգատներ ստացվեցին, որ մի քանի տեղերում ադմինիստրացիան արգելում է նրանց զէնք ձեռք բերել և ընդհանրապէս նկատվում է, որ վճռական միջոցներ են ձեռք առնվում մարտական խմբերի դէմ: Այն ժամանակ դաշնակցութիւնը որոշեց Դուբրովինի առաջնորդութեամբ յատուկ պատգամաւորութիւն ուղարկել պրեմիէր Ստօլիպինի մօտ բացատրութեան համար: «Своб. Мысль» լրագրի ասելով, պաշտօնական շրջանները, տեղեկանալով այդ դիտաւորութեան մասին, կողմնակի կերպով յայտնում են դաշնակցականներին, որ պատգամաւորութիւնը չի ընդունվի:

◆ Մօտ օրերս, «Русь» լրագրի ասելով, կայացել է հրէական ժողովրդական խմբակի կենտրօնական կօմիտէտի ընդհանուր նիստը, ուր քննվել է առհասարակ հրէական ընտրողների մասնակցութեան հարցը ամբողջ Ռուսաստանում: Կարդացվել են նախ զեկուցումներ իրերի դրութեան մասին այն նահանգներում, ուր մտցված են ազգային կուրիաները: Այդպիսի տեղերում հրէայ ազգաբնակութեան մէջ բօյկօտի տրամադրութիւնը բաւականին զօրեղ է:

Բօյկօտը աւելի է նկատվում մանաւանդ Վիլենի նահանգում, ուր հրէաները ոչ մի յոյս չունեն իրանց թեկնածուներին անցկացնելու: Միաձայն ընդունված բանաձևով հրէայ ազգաբնակութեանը կոչ է անվում ամենաեռանդուն կերպով մասնակցել ընտրութիւններին: Կենտրօնական կօմիտէտը բոլորովին պախարակում է բօյկօտի քայլը: Որոշված է խմբակի թեկնածուները առաջադրել հրէական բնակչութեան սահմանների մէջ եղած շատ քաղաքներում: Առանձին ուշադրութիւն է դարձնվում Վօլինի, Պօդօլսկի և Գրօդնենսկի նահանգներում, ուր հրէական թեկնածուները քաղաքային կուրիայում նահանգական ընտրութիւնների ժամանակ կարող էին յաղթութեան յոյս տածել:

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ՈՐՈՇՈՒՄՆ

◆ Սօցիալ-յեղափոխականների հիւսիսային կովկասեան կօմիտէտը բաց է թողել հետևեալ յայտարարութիւնը. «Վերջին ժամանակներս Եկատէրինօդարում և Հիւսիսային Կովկասի մի քանի այլ տեղերում սաստկացան մասնաւոր էքսպրօպրիացիաները և դրամաշորթութիւնները իբր թէ յեղափոխական նպատակների համար: Շատ յաճախ դրամաշորթողները մեծ աջողութեան համար իրանց նպատակների մէջ օգտվում են սօցիալ-յեղափոխականների կուսակցութեան անունով: Ի նկատի առնելով այդ հանգամանքը, սօցիալ-յեղափոխականների կուսակցութեան կովկասեան շրջանային կօմիտէտը յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ կուսակցութիւնը ոչ մասնաւոր էքսպրօպրիացիաներով, ոչ դրամաշորթութեամբ չէ պարապում և որ կուսակցութեան այն անդամները, որոնք կը մասնակցեն այդ գործերում, անմիջապէս կարտաքսվեն կուսակցութիւնից: Ինչ վերաբերում է այն անձանց, որոնք իրանց անձնական շահերից դրդված ծածկվում են կուսակցութեան անուան տակ, հիւսիսային կովկասեան շրջանային կօմիտէտը յայտնում է, որ կուսակցութիւնը նրանց պրօվօկատորներ է համարում: Վերջերս շրջանային կօմիտէտը ստացաւ մի քանի նամակներ, որոնցով դիմումն էր լինում զանազան անձանց և մահվան սպառնալիքով փող էր պահանջվում և որոնց տակ դրված էր «սօցիալ-յեղափոխական մաքսիմալիստների ռազմիկ թռուցիկ խմբի» կնիքը: Շրջանային կօմիտէտը յայտնում է, որ այդօրինակ կազմակերպութիւն ոչ մի տեղ գոյութիւն չունի և որ կնիքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ շանտաժիստների անգրագէտ կեղծիք»:

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Հեռագրական այն լուրերը, որոնք հաղորդում են նոր ընտրողական պայքարի սկզբնական գործողութիւնների մասին, կարօտ են հետևեալ ծանօթութեան: Այժմս ամենուրեք տեղի են ունենում գիւղախմբերի և բանւորական կուրիայի հաւատարմատարների (уполномоченные) ընտրութիւնները: Յայտնի է, որ ամեն գիւղախումբ (волость) ընտրում է երկու հաւատարմատար, իսկ ամեն մի արդիւնագործական հիմնարկութիւն, որ ունի 50-ական բանւոր, ընտրում է մէկ հաւատարմատար (ի հարկէ, այն տեղերում, որտեղ օրէնքով դա սահմանված է) և սրանք համապատասխան ժողովներում (съѣздъ) ընտրում են, իրանց հերթին՝ շատ սահմանափակ թւով՝ ընտրողներ (выборщики) նահանգական ընտրողական շրջանին մասնակցելու համար: Գիւղախմբերի և բանւորների ընտրվածների ուղղութիւնը en masse իմանալով, ի հարկէ, կարելի է կանխօրէն որոշել, թէ ինչ ընտրողներ կանցնեն վերջնական շրջանում՝ պատգամաւորներ ընտրելու համար:

Բայց այդ գուշակութիւնը հեռագրական լուրերից մեզ չէ տուած շնորհիւ մեր ինքնուրոյն «սահմանադրական» կարգերի. Նախ այդ տեղեկութիւնները թերի են, շատ անգամ վերացվելու ենթակայ: Բայց աւելի կարևորը նա է, որ գործակալութեան պաշտօնական լեզուն, ինչպէս բազմիցս նկատվել էր և նախորդ երկու ընտրութիւններին, կարօտ է սովորական լեզուի և իմաստի վերածվելուն. ինչ կը նշանակէ օրինակ՝ «չափաւոր», «ոչ այնքան ձախակողմեան», անգամ «պրավօյալ», կամ «մօնարխիստ»՝ այն գիւղացիների վերաբերեալ, որոնք գրեթէ առանց բացառութեան ընտրում են ձախակողմեան պատգամաւորներ: Յետոյ՝ նահանգական և գաւառական մեծ և փոքր սատրապները և սատրապիկները այնքան հալածանքների են ենթարկել նախկին ընտրված իրանց ոչ-ցանկալի անձերին, որ սրանք սովորաբար, զգուշութիւնից դրդված, իրանց կոչում են անմեղ անուններով. «չափաւոր», «մօնարխիստ» «աջակողմեան» և այլն:

Մենք կը սպասենք նահանգական շրջանների ընտրողների կազմի լրանալուն, որից յետոյ, այն էլ մօտաւոր ճշտութեամբ, կարելի կը լինի գուշակել ապագայ Դումայի կազմը:

Պ. Զ.

Յ. Գ.—Յօդուածս վերջացած և յանձնված էր տպագրութեան, երբ մենք ստացանք «Рус. Вѣд.» № 205, որ կարծես եկել էր մեր ասածը լուսաբանելու շօշափելի օրինակներով՝ այս ընտրողական պայքարի համար նմանապէս: Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, Մօսկվայի նահանգի 12 գաւառներում ընտրված են՝ 80 աջակողմեաններ, 185 չափաւորականներ և 45 ձախակողմեաններ: Եւ այժմ դուրս է գալիս, որ այդ «չափաւորականները» մի տեսակ կեղծ անուն է: «Голосъ Москвы» թերթը, որին կասկածել անգամ չէ կարելի ձախակողմեանների համակրութեան մէջ, տալիս է սակայն շատ հետաքրքիր տեղեկութիւններ: Ըստ հեռագրական տեղեկութիւնների, Սերպուխօվի գաւառում անցել են՝ 2 աջակողմեաններ, 24 չափաւորականներ, 2 ձախակողմեաններ. իսկ «Голосъ Москвы» հաղորդում է, որ անցել են գլխաւորապէս ձախակողմեաններ: Բօգօրօդսկ գաւառում, ըստ պաշտօնական աղբիւրի, ընտրված են 14 «մօնարխիստ»-ներ, 17 չափաւորականներ, 3 ձախակողմեաններ: «Голосъ Моск.» հաշւում է՝ «14 մօնարխիստ», 17 ձախակողմեան և երեք սօց.-յեղափոխականներ: Եւ այդպիսով, ըստ պաշտօնական տեղեկութիւնների, ձախակողմեանները Մօսկվայի նահանգում ոչ մի տեղ մեծամասնութիւն չեն կազմում, իսկ «Голосъ Москвы»-ի հաշւով՝ նրանք մեծամասնութիւն կը կազմեն առնուազն 4 գաւառում:

Նոյնը

ԲԱԳՒՈՒԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

III

Եթէ մօտիկից ծանօթանանք բանւորների առաջադրած պահանջների հետ, մենք կը տեսնենք, որ նրանք, համարեա մեծ մասամբ, էական տնտեսական բնաւորութիւն ունեն և, ի հարկէ, բոլոր ֆիրմաներում էլ միանման են ոչ այն պատճառով, որ նրանք կազմակերպված բանւորութեան համերաշխ գործակցութեան արտադրութիւններն են, այլ որովհետև անկախ բանւորների ցանկութիւնից՝ միջավայրի միատեսակ կեանքն ու աշխատանքը այդ է թելադրում: Պահանջների ամենաէական կէտերը հետևեալներն են. աշխատանքի վարձագինը կանօնաւորել—աւելացնել, տալ բնակարանի վարձ, ապահովել, պարգևներ տալ, կանօնաւորել տարեկան արձակուրդները, բարելաւել սանիտարական-առողջապահական պայմանները, 8 ժամվայ աշխատանքի օր մտցնել, պաշտօնապէս ընդունել բանւորական կօմմիսիաների ու պրօֆեսիօնալ կազմակերպութիւնների գոյութիւնը և այլն:

Ուշադրաւ է այն, որ համարեա բոլոր ֆիրմաների պահանջների մէջ էլ մտցված է պարգևներ տալը (նագրադներ), իսկ մի քանի տեղերում մինչև անգամ պահանջում են ստացվող նաւթից որոշ տոկոս պարգև նշանակել: Օրինակ՝ «Բօրնը» որոշել է տալ բանւորներից իւրաքանչիւրին ամեն մի միլիօն պուդ նաւթից 5 օրվայ վարձագնի գումարը. Նոյնը արել է և «Բիբի-Էյբաթի նաւթային ընկերութիւնը»:

Անշուշտ, եթէ բանւորութիւնը փոքր ինչ գիտակից լինէր, հանդէս չէր գայ զանազան պարգևների առաջարկներով, որ ստորացնում է բանւորներին և ջլատում նրանց ոյժը, այլ, դրա փոխարէն, կաշխատէր բարձրացնել տալ վարձագները և մինիմում չափ սահմանել ընդհանուրի համար:

Յաճախ անախորժ թիւրիմացութիւնների առիթ է տալիս տօները տօնելու հարցը, գլխաւորապէս արհեստանոցներում: Գործատէրը ընդունում է կնիժկաների մէջ յիշված տօների քանակը միայն: Մինչդեռ բանւորը ուզում է տօնել աւելին, եթէ ոչ բոլորը: Ռուս բանւորը կամենում է տօնել իր եկեղեցական տօները, հայը, թուրքը և այլազգին՝ իրանը: Իսկ եկեղեցական տօները շատ:

Ցանկալի կը լինէր սակայն, որ բանւորները, այդ տօները գործադրելով կուլտուրական գործունէութեան համար, բաւականաչափ արդարացի պատճառաբանութիւն տային իրանց այդ պահանջին:

Վաղ թէ ուշ այդ խնդիրը դառնալու է հերթական, և աւելի լաւ կը լինէր, եթէ հէնց այժմից լուրջ ուշադրութեան առնվէր այն:

Արդիւնաբերութեան շրջանում տիրող ներկայ քաօսական շարժումը առիթ է տալիս մտածելու, որ գործարանատէրերի ու բանւորների յարաբերութիւնները կանօնաւորելու և արդիւնաբերութիւնը պարբերաբար կրկնվող կրիզիսներից ազատելու նպատակով անհրաժեշտ է նպաստել, որպէս զի բանւորութեան մէջ կազմակերպվի մի հեղինակաւոր մարմին, որպէսզի նա ունենայ իր պաշտօնական ներկայացուցչութիւնը արդիւնաբերողների առաջ վիճելի կէտերը և թիւրիմացութիւնները պարզելու համար:

Միայն այդ դէպքում շարժումը իր բնական ընթացքը կը ստանայ և արդիւնաբերական կեանքը կազատէ թունաւոր մթնոլորտից:

Այդպիսի անկուսակցական մի մարմնի անհրաժեշտութիւնը արտայայտվում է վերջին ժամանակներս բանւորների կողմից առաջադրվող պահանջներից շատերի մէջ:

Բանւորական կօմմիսիաների գոյութիւնը օգտակար է ոչ միայն բանւորական շահերի տեսակէտից, այլ արդիւնաբերութեան խաղաղ զարգացումը պարբերաբար կրկնվող կրիզիսներից զերծ պահելու համար:

Եւ եթէ այսօր բանւորութիւնը դնում է այդ իբրև պահանջ, արդիւնաբերողները չը պէտք է զլանան ընդառաջ գնալ նրանց, եթէ միայն իրանցից անկախ չը կան խոչընդոտներ:

Թերևս, մեր արդիւնաբերական այդ խոշոր կենտրօնում, մասնաւորապէս և ուրիշ տեղերում տիրող բանւորական քաօսային, հիւանդոտ շարժումը զսպելու և կանօնաւորելու արմատական միջոցներից մէկն էլ հէնց այդ է:

Բանւորական միջավայրում բուն դրած, իրանց գոյութիւնը պահպանող կազմակերպութիւնների պարտքն է լուրջ ուշադրութիւն դարձնել շարժման այդ աննորմալ ընթացքի վրա: Անցեալի վերաբերմամբ նրանց բռնած դիրքը, նրանց սխալ գործելակերպը մենք տրամադիր ենք վերագրելու անցողական շրջանի աննպաստ հանգամանքներին: Սակայն այժմ, որքան էլ գոյութիւն պահպանելիս լինեն միևնոյն աննպաստ պայմանները, արդիւնաբերութեան ներկայ կրիզիսները պէտք է թելադրեն նրանց անախորժ իրականութեան վրա նայելու լրջախոհ և անաչառ վերաբերմունքով. ոչ միայն բանւորական շահերի տեսակէտից, այլ և ընդհանուր ազգաբնակութեան, որի տնտեսական և կուլտուրական առաջադիմութիւնը սերտ կերպով շաղկապված է արդիւնաբերութեան զարգացման հետ:

Արդիւնաբերութեան բաղդով շահագրգռված է ոչ միայն կապիտալիստը, ոչ միայն բանւորութիւնը, այլ և ամբողջ ժողովուրդը, առանց դասակարգային ստորաբաժանումների:

Կանգնել իրական հողի վրա,—ահա ինչ ենք մենք առաջարկում:

Մտնել միմեանց դրութեան մէջ, հաշուի առնել և՛ բանւորի շահերը, և՛ արդիւնաբերութեան պայմանները—ահա թէ ինչը կարող է մօտեցնել մեզ փոքր ի շատէ տանելի վիճակի:

Այլապէս կը վնասվեն երկու կողմն էլ, և և մենք ականատես կը լինենք մի շարք անպատեհութիւնների, որոնք կը վերջանան տնտեսական ճգնաժամերով և ապարդիւն զոհաբերութիւններով:

Դիտող

Բագու, 3 սեպտեմբերի

Յ. Գ.—Յօդուածիս II գլխի մէջ («Մշակ» № 108) խօսելով իտալական գործադուլի մասին ես յիշել էի, որ երրորդ դէպքը տեղի է ունեցել «քաղաքային դումայի բուֆէտի» ծառայողների մէջ. պէտք է լինի հասարակական ժողովարանի բուֆետի:

Նոյնը

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի հայ դրամատիկան և հայ դերասանական ընկերութիւնների նախաձեռնութեամբ շուտով կը բացվի հայկական ներկայացումների VI թատերաշրջանը և կը տրվեն մի շարք ներկայացումներ:

Դերասանական խումբը կազմված է հետևեալ անձերից. տ. տ. Արաքս, Զամուկեան, Մայսուրեան, Մելիքեան, Յասմիկ, Նոնիկեան, օր. Ծուրինեան և ուրիշներ. պ. պ. Դիմաքսեան, Զարիֆեան, Թորոսեան, Մամիկոնեան, Մելիք-Ալլահվերդեան, Միրզոյեան, Յարութիւնեան, Ռշտունի, Վրոյր, Տէր-Դաւթեան և ուրիշներ:

Կը ներկայացվեն հետևեալ պիէսները. ինքնուրոյն րէպերտուար՝ «Արցունքի հովիտը» (փոփոխած), «Սպանված աղաւնի», «Ուսանողներ», «Աշխարհի կործանումը». թարգմանական՝ «Բօհէմիա», «Նոր Գէտտօ», «Ռօբերի շղթայ», «Գործի մէջ», «Վարքի Թիանշան», «Նորապսակներ», «Հրէաներ», «Ջիօկօնդա», «Դպրոցական ընկերներ», «Գող», «Ամուրիների ակումբը», «Երջանկութեան համար», «Բարի դատաւորը», «Նիօբէ», «Պարոն կառավարիչ» և ուրիշներ:

Ներկայացումները տեղի կունենան երկուշաբթի օրերը Արտիստական Ընկ. թատրոնում, իսկ երեքշաբթի օրերը՝ Թիֆլիսի ժողովարանում:

Գլխաւոր րէժիսորի պաշտօնը վարելու է Մ. Զարար, իսկ օգնականինը՝ Վ. Տիրացեան: Յուշարար լինելու է Զարզարեան:

Առաջիկայ երկուշաբթի օր, սեպտեմբերի 24-ին, տեղի կունենայ այս տարվայ հայերէն ներկայացումների սկզբնաւորութիւնը Արտիստական թատրոնում:

Առաջին ներկայացման համար նշանակված է Ա. Ահարոնեանի «Արցունքի հովիտը»:

—

Չորեքշաբթի, սեպտեմբերի 26-ին, Արտիստական թատրոնում կը սկսվեն ռուսական ներկայացումները դերասանուհի Լ. Եաւորսկայայի ղեկավարութեամբ:

Րեպերտուարը շատ բազմազան է, և նրա մէջ մտնում են Թիֆլիսում դեռ չը խաղացված պիէսներ, որոնք պատկանում են զանազան ուղղութիւնների և դպրոցների:

Ներկայացումները կը սկսվեն կոմս Լ. Տօլստօյի «Խաւարի իշխանութիւնը» («Власть тьмы») պիէսով:

ՄԻ ՆՈՐ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

(Նամակ խմբագրութեան)

Թիֆլիս, սեպտեմբերի 20-ին

Մեր հօր՝ հանգուցեալ Զաքարիա Զանփօլադեանի մահվան տարեդարձի առիթով, որ լրանում է ամսիս 22-ին, մենք որոշեցինք նուիրել և ընդ սմին ներկայացնում ենք խմբագրութեանդ երեք հազար (3000) րուբլի, որից 2000 ր. յանձնելու Թիֆլիսի հայոց Կենտրօնական Նպաստամատոյց Յանձնաժողովին՝ Երևանի նահանգի սովեալների համար, և 1000 րուբլին՝ ուղարկելու Կ. Պօլսի հայոց Օրմանեան պատրիարքին՝ Նպաստից Սնդուկին յանձնելու համար յօգուտ Թիւրքահայ սովեալների:

Հանգուցեալի ժառանգներ

ՅՕԳՈՒՏ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԱՂԷՏԵԱԼՆԵՐԻ

Ստացանք հանգուցեալ Զ. Զանփօլադեանի ժառանգներից Երևանի նահանգի սովեալների համար երկու հազար (2000) րուբլի, որ և յանձնեցինք Թիֆլիսի հայոց Կենտրօնական Նպաստամատոյց Յանձնաժողովին:

ՅՕԳՈՒՏ ԹՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ

Ստացանք. 1) Ռօստովից Յ. Սէջենեանից յօգուտ թիւրքահայ սովեալների 15 ր., որ նուիրել են՝ Գ. Գայեան 5 ր., Եղ. Խաթանասեան 5 ր., Յ. Սէջենեան 5 ր., 2) հանգուցեալ Զաքարիա Զանփօլադեանի ժառանգներից մի հազար (1000) րուբլի: Ընդամենը ստացել ենք մինչև այժմ 1382 ր. 11 կ., որ և ուղարկեցինք Կ. Պօլիս Օրմանեան պատրիարքին, Նպաստից Սնդուկին յանձնելու համար:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Բագու, սեպտեմբերի 12-ին.—«Մշակի» ընթերցողները երևի կարօտ կը լինեն տեղեկանալու Բագւում տեղի ունեցած վերջին անցքերից, ցաւերից, մանաւանդ որ $1^1/_2$ միլիօն հայ ժողովուրդ ունեցող Ռուսաստանը և Կովկասը զուրկ էին վերջին 3—4 ամսվայ ընթացքում լուրջ, հասարակական ցաւերով առաջնորդվող օրգաններից, օրգաններ, որոնց իդէալը, նպատակը և ամբողջ տենչանքն ու մտածողութիւնը կենտրօնացած լինի զուտ հասարակական շահերի, ժողովրդի կրթական գործի ու ապագայ սերունդի առաջադիմութեան վրա: Այդպէս են քարոզում և այդ հիմքի վրա են դրված ամբողջ յեղափոխական կազմերը. հասարակական շահ ու հասարակական շահ:

Սակայն ինչ են կատարվում և դեռ պիտի կատարվեն մեզանում, մասնաւորապէս հայութեան աշխարհում:

Անշուշտ «Մշակի» ընթերցողները կը յիշեն, թէ 5—6 ամիս առաջ ինչպէս էին կոտորում տեղիս անիշխանականներ կոչված խմբակին: Այդ մասին մենք մի քանի նամակներ տպագրեցինք «Մշակի» էջերում և մատնանիշ արինք, որ մի նոր ինքնապաշտպանութեան խմբակ է լոյս ընկել «Ջեյրօննի-սօտնի» անունով, որը նպատակ է դրել «բուկի-վերխ» անողներին վերջ դնել: Նկարագրեցինք և այն, թէ ինչպէս օր ցերեկով փողոցի մէջ գնդակահար են անում սրան ու նրան, առանց իմանալու թէ ինչ են անում իրանք:

Այդ ժամանակից քիչ յետոյ դադարեց «Մշակը» (նախատինք, մեծ նախատինք եթէ ոչ ընդհանուր հայութեան, գոնէ Թիֆվիսեցիներին, որոնք իրանց հայերէն խօսելով պարտական են «Մշակին» և նրա հիմնադրին), և մենք հնարաւորութիւն չունեցանք մեր ասածները ապացուցանելու։

Երբ «բուկի-վերխ» անողներից մի քանիսը սպանվեցին, մի քանիսը փախան և մի քանիսն էլ վիրաւորվեցին ու բանտարկվեցին, Բագւում մի քանի շաբաթ խաղաղվեց։ Այդ խաղաղ ժամանակ հրապարակ եկաւ ինքը, այդ անիշխանականներին հալածող, սպանող խմբակը և սկսեց ինքը «բուկի-վերխ» անել։ Սակայն դրանց հալածել և բանտարկելը դժուար չէր․ ոստիկանութիւնը բոլորին էլ իր հինգ մատների պէս ճանաչում էր, և մի գեղեցիկ գիշեր բոլորին էլ բանտարկեց։

Եւ դեռ մենք համարձակութիւն ունենք ասելու, որ մենք մեծ յեղափոխութեան շրջան ենք անցնում։ Եթէ մէկը մեզ հարցնելու լինի, թէ ինչ ենք ձեռք բերել այդ յեղափոխութեան շրջանում, ինչ շահաւէտ օգուտներ ենք տուել բազմաչարչար ժողովրդին, մենք ոչինչ ասել չենք կարող բացի այն, որ թարմ ոյժերին գրական աշխարհում հայհոյանք ենք սովորեցրել, ֆիզիքական աշխարհում աւազակութիւն։

Եթէ մի րոպէ աչալուրջ ուշադրութիւն դարձնելու լինենք մեր պարբերական հրատարակութիւններին, նորից ուշադրութեամբ, սառնարիւն կերպով կարդալու լինենք մեր ամենօրեայ լրագիրները, կը տեսնենք, որ վերջին երկու-երեք տարվայ ընթացքում ոչ թէ առաջ ենք անցել, այլ յետ ենք մնացել։ Եւ թող մեզ ներվի նկատել, որ 1870-ական թւականներից մինչև 1900 թւականները մեր հասարակական գործիչները, հրապարակախօսները, վիպասանները, բանաստեղծները և այլն ձըգտում էին հասնելու այն վեհ նպատակին, որի անուամբ իրանք հրապարակ էին եկել, սակայն մեր այժմեան գործիչները, մանաւանդ իրանց յեղափոխական անուն տուողները, լոկ նպատակ են դրել ժողովրդի ոսկորի վերջին ծուծը քամելու ու փափուկ բազկաթոռի վրա բազմած հրահանգներ արձակելու։

Մեր այդ ասածները հալած իւղի պէս կարող է ընդունել հին սերունդը, եթէ նա ծանօթ է մեր հասարակական անցեալին, գրականութեանը, մեր լրագրութեանը։

Ս. Թ. ուսումնական տարին Բագւի նըման մի քաղաքում, ուր փողը աւազի նման է, ոսկիները սարերի պէս դիզված, 400-ից աւելի 8—12 տարեկան երեխաներ մնացին դուրսը, որովհետև նրանց համար մտածող չը կայ, ուսումնարանի տեղ չը կայ։

Մի թուրք, ինչպէս լսեցինք հաստատ աղբիւրներից, հայկական թաղում գտնվող մի շինութիւն, որը քաղաքին է պատկանում, ձրիաբար տալիս է ուսումնարանի համար հայ մանուկների օգտին, բայց այժմեան մեր գործիչները թուրքի չափ էլ չեն մտածում ապագայ սերունդի համար և մի քանի ուսուցչի ռոճկի համար լռում են։

Լռել էր և լրագրութիւնը, հայ թերթերը, որովհետև նրանք,— նորից թող ներվի մեզ ասել, — զբաղված էին իբր թէ գործով, մինչդեռ մի ամբողջ մատաղ սերունդ է փչանում, որի մի մասին միւս տարի ոչ հայոց ուսումնարանները կընդունեն, ոչ էլ պետական, որովհետև 13—14 տարեկան պիտի լինեն, և «մեծ է» ասելով հայ գործիչները խղճները հանգիստ պիտի նստեն։

Այդ է մեր ցաւը, հայ ժողովուրդ,․ խօսեցէք մեր ցաւերից։

Թ. Մէժլումեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Սեպտեմբերի 18-ին Թիֆլիսից Բաթում մեկնեց Սակսոնիայի պրինց Մօրիցը։

◆ Թիֆլիսի գեներալ-նահանգապետը փակել է «Արօր» լրագիրը վնասակար ուղղութեան համար։ Տառերը գրաւված են։

◆ Շուշու Ագուլեաց եկեղեցում ռումբեր պահելու մէջ մեղադրվող 7 հոգուն Գանձակի զինուորական դատարանը դատապարտել է բանտարկեալների բաժնում իւրաքանչիւրին երեք տարով։

◆ Սեպտեմբերի 19-ին Հաջիկաբուլ կայարանում խոլերայից մեռել է կոնդուկտոր Միխայլովը։

◆ Հացթուխները թոնրի հացի ֆունտը Թիֆլիսում վաճառում են 6 կոպէկով։

◆ Հոկտեմբերի 22-ին Թիֆլիսի նահանգական դատարանում քննվելու է գիմնազիստ՝ Ալէքսանդր Էգնատաշվիլիի գործը, որը մեղադրվում է Գոտօշիայի փայտի պահեստի վրա յարձակվելու և սպառնալիքով փող պահանջելու մէջ։ Մեղադրեալին պաշտպանում է երդուեալ-հաւատարմատար Յովսէփ Լորդանեան։

◆ «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ սեպտեմբերի 12-ին Պետերբուրգում կայացել է քահանաների ժողով կոնսիստօրիաների դատարանի վերացման և համառուսական կրօնական ժողովի ընտրութիւններին մասնակցելու մասին խորհրդակցելու նպատակով։ Ժողովին ներկայ են եղել Պետերբուրգ քաղաքի քահանաները՝ թւով 79 հոգի, Տվերի թեմից՝ 4 քահանայ, Նովգորոդից՝ 2, Մոսկվա քաղաքից՝ 5, Կովկասից՝ 6 հայ քահանաներ և մի եպիսկոպոս (?)։ Երկար խորհրդակցութիւնից ու տաք վիճաբանութիւններից յետոյ քահանաների ժողովը միաձայն եկել է այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է բոլորովին վերացնել առհասարակ հոգևոր դատարանը, իսկ ծագող բոլոր հոգևոր գործերը յանձնել սովորական քաղաքացիական դատարանների քննութեան։ Միևնոյն ժամանակ ներկայ եղող բոլոր քահանաները վճռել են չը մասնակցել առաջին համառուսական կրօնական ժողովին, պատճառաբանելով իրանց մերժումը նրանով, որ համառուսական կրօնական ժողովին պէտք է մասնակցեն ոչ միայն քահանաները և կուսակրօն հոգևորականները, այլ և ծխականները։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 7-ին, քաղաքային վարչութեան շինութեան մէջ նշանակված է սանիտարական մասնաժողովի նիստը՝ քաղաքի առողջապահութեանը վերաբերող մի քանի հերթական խնդիրներ լուծելու համար։

◆ Երէկ, սեպտեմբերի 20-ին, առաւօտեան ժամը $8^1/_2$-ին, Բաթումից Թիֆլիս բերվեց սպանված Սմբատ Յարութիւնեանի մարմինը։ Դագաղի վրա դրված էին 40 պսակներ ընկերների և այլ անձանց կողմից։ Վօկզալում հոգեհանգստից յետոյ մի պարոն ճառ խօսեց, ընդգծելով թշուառ երիտասարդի գործունէութիւնը։ Մարմինը ուղարկվեց Ղազախ՝ իր հայրենիքում թաղելու։

◆ Իշխ. Օլգա Ճավճավաձէն միայն նախընթաց օրն է ուշքի եկել և տեղեկացել իր ամուսնու մահը։ Տիկինը ցանկութիւն է յայտնել ամուսնու գերեզմանը տեսնել, բայց նրան շրջապատողները խորհուրդ են տուել նրան՝ յետաձգել մինչև կիրակի օրը։

◆ Վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութիւնը արդէն ձեռնարկել է հրատարակելու հանգուցեալ Ճավճավաձէի հեղինակութիւնները բրօշիւրներով և շատ էժան գներով տարածելու է ժողովրդի մէջ։ Իւրաքանչիւր գրքոյկի մէջ զետեղված կը լինեն հեղինակի պատկերը և կարճ կենսագրութիւնը։ Առաջին գիրքը—«Պատկերներ աւազակի կեանքից»,—արդէն տպագրվում է և շուտով լոյս կը տեսնի։

◆ Երեք օր առաջ, երեկոյեան ժամը 7-ին, Մոսկովսկի և Օլգինսկի փողոցների անկիւնում ոստիկանութիւնը ձերբակալել է երկու երիտասարդների, որոնք ցրելիս են եղել սօց.-դէմօկրատների կոչը՝ ուղղված ռուսաց կուրիայի ընտրողներին։ Ձերբակալվածների անուններն են Ֆ. Կրօնշտէյն և Ա. Նէչաեվ։

◆ Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է գիւղացի Կարաման Նանիձէին հրատարակել Թիֆլիսում ամենօրեայ լրագիր ռուսերէն լեզուով «Մեր աշխարհ» անունով։

◆ Սեպտեմբերի 17-ին, «Бак. Эхо» լրագրի ասելով, Բագւի քաղաքային վարչութիւնը իր նիստում ի նկատի առնելով, որ քաղաքում այլ ևս խոլերա չը կայ և չի էլ կարող լինել, որոշել է արձակել քաղաքային 2-րդ խոլերային հիւանդանոցի ծառայողների ամբողջ կազմը, բացի բժշկից։

◆ Քաղաքային վարչութիւնը առաջարկել է առևտրա-տնտեսական հսկիչներին ներկայացնել քաղաքային պարտատէրերի ցուցակները՝ նրանց դէմ խիստ միջոցներ ձեռք առնելու համար։

◆ Զինուորական-նահանգական դատարանին են յանձնված Նոր-Բայազէտի բնակիչ Վանուլ Անուկեանը և Թիֆլիսեցի Վանօ Մանուկեանը, որոնք մեղադրվում են Սօղանլուխի ճանապարհին կառապան Բէգլարովին կողոպտելու մէջ։

◆ «Бак. Эхо» լրագիրը տեղեկացել է, որ տեղական ադմինիստրացիան դիմել է Փոխարքային՝ խնդրելով թոյլ տալ անցագիրներ տալու գործը յանձնելու ոստիկանատներին, որով բաւականաչափ դիւրութիւններ տրված կը լինէին թէ տեղական ազգաբնակութեանը և թէ բանւորներին, որոնք անցագիրներ ստանալու համար ահագին ժամանակ են կորցնում։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սեպտեմբերի 17-ին Թիֆլիսի արքունական թատրոնի № 11 օթեակում գնդապետ Վադբօլսկուց մի անյայտ անձնաւորութիւն գողացել է հեռադիտակը։

—

Սեպտեմբերի 19-ին ոստիկանութիւնը ձերբակալել է 13 տարեկան Մահմէդ Հասան Սադղ-օղլին, որը փորձել է մէկ րուբլանոց կեղծ դրամ մանրել տալ։ Տղային ձերբակալել են. Նա բացատրել է, որ նրան այդ փողը տուել է Սօլօմօն Կուսխի-խանը մանրացնելու։ Կուսխի-խանը ձերբակալված է, իսկ նրա բնակարանում, խուզարկելիս, գտել են 280 տառեր։

—

Սեպտեմբերի 19-ին, երեկոյեան ժամը 6-ին, Մուղդուսի-Յակոբեանի տպարանում Սամսոն Բարայեանը տպարանատիրոջ որդու հետ վիճելիս ուզեցել է դանակով վիրաւորել վերջինին, բայց նրան ձերբակալել են։ Ոստիկանատուն տանելիս Բարայեանը ուզեցել է փախչել, բայց նրա վրա մի քանի անգամ կրակել են և թեթև կերպով վիրաւորել։

—

Սեպտեմբերի 19-ին, երեկոյեան ժամը 9-ին, Բաշմաչնի շարքում Ա. Զարինեի սայլը անցել է պարսկահպատակ Մարիամ Կակելաշվիլու վրայով և մի քանի տեղից ջարդուածքներ է հասցրել։

—

Սեպտեմբերի 19-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Ավճալեան փողոցում անցնող հոգևոր դպրոցի կոմիսար Օկուլիչի վրա յարձակվել են 2 զինված չարագործներ և, խլելով նրա մօտ եղած 600 րուբլուց 121 ր. 10 կ., անյայտացել են։

—

Սեպտեմբերի 19-ին, երեկոյեան 8 և կէս ժամին, Ելիզավետինսկի փողոցում մասնաւոր հիւանդանոցի պատշգամբից վայր է ընկել Ղազախի քաղաքային դպրոցի աշակերտ Համիդ Իւսուֆ-Աղա-օղլին և ստացել է աննշան ջարդուածքներ։

—

Սեպտեմբերի 19-ին, երեկոյեան ժամը 5-ին, Պետրո-Պավլովսկի և Կադբերովսկի փողոցների անկիւնում ատրճանակի հարուածով վիրաւորված է Սերգէյ Աֆրիամօվը։ Վիրաւորվածը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոց։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Այս տարի գեներալ-նահանգապետների և նրանց ատեանների պահելու ծախքերը մի քիչ պակաս են մի միլիօն րուբլուց։ «Русь» լրագիրը հետևեալ տեղեկութիւններն է տալիս այդ մասին։ Կովկասեան Փոխարքան իր ատեանի ծախքով միասին ստանում է 163,342 րուբլի ռոճիկ։ Գեներալ-նահանգապետների ատեաններին ռոճիկ յատկացված է—Վարշավային՝ 126,233 րուբլի, Վիլենի, Կօվենսկի և Գրօդնենսկի՝ 45,400 րուբլի, Կիէվի, Պօդօլսկի և Վօլինի՝ 56,993, Մոսկվային՝ 52,563, Պրիամուրեան՝ 74,400, Իրկուտսկին՝ 78,566, սարահարթերի՝ 42,566 րուբ.։ Բացի դրանից, գեներալ-նահանգապետների և Փոխարքայի համար 1907 թւի ռոճիկ սահմանված է՝ Կովկասեան Փոխարքային հազար րուբլի, Վարշավայի գեներալ-նահանգապետին՝ 38,000, Մոսկվային՝ 36,000, Կիէվի, Վօլինի և Պօդօլսկի՝ 24,000 Վիլենի, Կօվենսկի և Գրօդնենսկի՝ 24,000 Պրիամուրեան՝ 33,828 րուբլի, սարահարթերի՝ 18,000 և Իրկուտսկին՝ 22,000 րուբլի։ Ժամանակաւոր գեներալ-նահանգապետներին, հարաւային լեռնային-գործարանական մասին՝ 12,000 րուբլի, շուրջբալթեան՝ 24,000, Կրօնշտադի՝ 12,000. Գեներալ-նահանգապետների օգնականներին. Վարշավային՝ 10 հազար րուբլի, Փոխարքայի օգնականին՝ 12 հազար րուբլի։

◆ Մօտ ժամանակներս Լօձի ֆաբրիկանտների և արդիւնաբերողների խորհրդակցական ժողովը վճռել է աւելացնել ոստիկանների թիւը։ «Товарищъ» լրագրի ասելով, ոստիկանների թիւը աւելացվելու է 1,000 հոգով. գօրօդօվօյներին ռոճիկ պէտք է տրվի ամսական 35 րուբլի և զինելու են նրանց բրաունինգներով ու մաուզէրներով։ Ոստիկանութեան վերակազմելը կը պահանջէ քաղաքից 480 հազար րուբլի տարեկան ծախք։ Այդ գումարը կը հաւաքվի գործարանատէրերից, վաճառականներից և ֆինանսական ու բանկային հաստատութիւններից։ Այդ նպատակով ֆաբրիկանտները վճարելու են տարեկան 6—8 րուբլի ամեն մի բանւորի համար։

◆ «Сегодня» լրագրի ասելով, սեպտեմբերի 12-ին 2-րդ Պետական Դումայի անդամ Ծերեթելին պահակների հսկողութեամբ ներկայացել է Պետերբուրգի դատաստանական պալատի դատախազ Կամիշանսկուն։ Ծերեթելին խնդրել է թոյլ տալ իրան տեսակցութիւն ունենալու իր ծանօթների ու ազգականների հետ։ Լուրերին նայելով՝ Կամիշանսկին թոյլատրել է։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 16-ին

Կօջորի ս. Կարապետ եկեղեցու երեցփոխութեան պաշտօնը այս տարվանից ստանձնելով իր վրա կոյս Հռիփսիմէ Թայիրեանցը, կարճ ժամանակամիջոցում կարողացաւ նա նուիրատուութիւնների հանգանակութեամբ վերանորոգել եկեղեցուն կից չորս կացարանները, շրջապատ պարիսպը և հարթել եկեղեցու ամբողջ բակը։

Եկեղեցին ունի և այլ վերանորոգութիւնների պահանջ, որի համար և մի քանի բարեգործ անձեր խոստացել են իրանց նուիրատուութիւնները։ Ցանկալի էր, որ նուէր խոստացող անձերը շտապէին ի կատար ածել իրանց խոստումները, որպէս զի գէթ առաջիկայ տարի վերջնականապէս աւարտվէին մնացորդ վերանորոգութիւնները։

Ի դէպ է յիշել, որ հանգուցեալ Իվան Մինայեվիչ Միրզօյեվը կենդանի ժամանակ խոստացել էր իր ծախքով եկեղեցու բակը ջուր հանել։ Սակայն անակնկալ մահը արգելք եղաւ հանգուցեալին իրագործելու իր բարենպատակ խոստումը։ Ցանկալի էր, որ հանգուցեալի ժառանգները բարի գտնվէին ի կատար ածելու Իվան Մինայեվիչի ջերմ փափագը։

Սարգիս Ալէքսանեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՊԻ ՆՈՐ ԷՆՑԻԿԼԻԿԱՆ

Պապի հէնց նոր հրատարակած էնցիկլիկան ուղղված է մօդէրնիզմի դէմ, այսինքն րէֆօրմատօրական ընթացքների դէմ կաթօլիկութեան մէջ։ Նա մանրամասնաբար քննում է մօդէրնիզմի արտայայտութիւնները փիլիսօփայութեան, աստուածաբանութեան, պատմութեան, կրիտիքական գրականութեան և քաղաքական հոսանքների մէջ և այն եզրակացութեանն է գալիս, որ մօդէրնիզմը կազմում է բոլոր հերետիկոսական վարդապետութիւնների սինտեզը և որ նա սրամարանօրէն պէտք է հասցնէր այն մտքին, թէ Աստուած չը կայ։ Ոչինչ սահմաններ չը ճանաչող ձգտումը դէպի գիտութիւնը և դէպի ինդիվիդուալիզմի անափառութիւնը, անհասկացողութիւնը և յարգանքի բացակայութիւնը դէպի իսկական կաթօլիկ գիտութիւնը և կաթօլիկ դաւանութիւնը առաջացրին մօդէրնիզմով հրապուրվելու տենչանքը կաթօլիկներից շատերի և կաթօլիկ հոգևորականութեան մի մասի մէջ։ Այդ պատճառով էնցիկլիկան հրամանագրում է հետևեալ միջոցները։ 1) Սխոլաստիկ փիլիսօփայութեան և աստուածաբանութեան դասատուութիւնը պէտք է լինի բոլոր սեմինարիաներում և կաթօլիկ համալսարաններում խիստ-կաթօլիկ հոգով։ 2) «Մօդէրնիզմի» կողմնակիցները պէտք է հեռացվեն կառավարիչների և դասատուների պաշտօններից սեմինարիաներում և կաթօլիկ համալսարաններում։ 3) Եպիսկոպոսները և Ս. Աթոռի պատուիրակները պարտաւոր են հսկելու այն բանի վրա, որ քահանաները և հաւատացեալները չը ծանօթանան մօդէրնիստական մամուլի հետ։ 4) Իւրաքանչիւր թեմում հիմնվում է գրաքննական ատեան կաթօլիկ մամուլի վրա հսկելու համար։ Քահանաներին արգելվում է, որպէս այդ արդէն արել է Լևոն XIII, հրատարակել պարբերական թերթեր առանց եպիսկոպոսների թոյլտուութեան։ 5) Քահանաներին արգելվում է կազմել համագումարներ բացի այն հազուագիւտ դէպքերից, երբ մօդէրնիզմի զանազան հոսանքների վտանգ չէ ներկայանում։ Բացի դրանից իւրաքանչիւր թեմում պէտք է հիմնվեն վերահսկող խորհուրդներ ժամանակակից կեղծ վարդապետութիւնների վրա հսկելու համար։ Այդ խորհուրդների գործունէութեան մասին եպիսկոպոսները պարտաւոր են զեկուցանելու պապին։

ԱՆԳԼՕ-ՌՈՒՍԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Մինչ այնտեղ՝ Պարսկաստանում ժողովուրդը շարունակական ալեկոծութեան մէջ է, ճիգեր է թափում իր հայրենիքը անկախութեան մէջ դնել, որպէսզի այս ու այն եւրոպական «գեավոր» պետութիւնները իրաւունք չունենան նրա ներքին քաղաքական ու տնտեսական գործերին խառնվելու, նրանց վրա այս կամ այն ձևով ազդելու, այստեղ՝ հեռաւոր Պետերբուրգում, հէնց այդ «գեավոր» պետութիւններից երկուսը՝ Ռուսաստանն ու Անգլիան՝ միմեանց մէջ պայմանագիր կնքեցին, որով, առանց Պարսկաստանի՝ ցանկութիւնն ու կամքը հարցնելու, նրանք համաձայնութեան եկան, թէ իրանցից իւրաքանչիւրը ինչ ձևով և ինչ չափով պիտի այսուհետև շահագործի այդ երկիրը և ազդեցութիւն ունենայ նրա ներքին գործերի վրա։

Ինչպէս «Մշակի» ընթերցողները արդէն գիտեն, նոր կնքված անգլօ-ռուսական պայմանագիրը Պարսկաստանի վերաբերեալ ընդամենը հինգ կէտերից է բաղկացած. 1) Անգլիան պարտաւորվում է ոչ մի արդիւնագործական, առևտրական, երկաթուղիներ, խճուղիներ, հեռագիր և այլն շինելու կօնցեսսիաներ չը վերցնել Պարսկաստանի այն մասում, որ գտնվում է Ռուս-Աֆղանիստանի սահմանից սկսվող՝ Սպահան, Իեզդ և Հակկի միջով անցնող ու Շիրին, Կասրի վերջացող գծից դէպի հիւսիս. 2) Ռուսաստանն էլ իր կողմից պարտաւորվում է նոյն բանը չանել Աֆղանիստանի սահմանից սկսվող՝ Գազիկ, Բիրջան, Քիրմանով անցնող ու Բենդեր-Աբասում վերջացող գծից դէպի հարաւ. 3) Ռուսաստանն ու Անգլիան փոխադարձաբար պարտաւորվում են այդ երկու նշանակված սահմանների միջև գտնված տարածութեան վրա կօնցեսսիաներ վերցնելիս միմեանց չը հակառակել, միայն թէ նրանք նախօրօք պէտք է միմեանց յայտնեն, թէ այս ինչ կամ այն ինչ կօնցեսսիան ցանկանում են վերցնել։ Այլ խօսքերով, այս երրորդ տարածութիւնը այն չէզոք հողն է, որ սովորաբար պետութիւնները փոխադարձ համաձայնութեամբ սահմանում են իրանց սահմանների միջև, զանազան անախորժ թիւրիմացութիւններից ազատ մնալու նպատակով. 4) երկու մեծ պետութիւնները պայմանաւորվում են, որ պարսկական բոլոր մաքսատներից,—բացի Ֆարսիստանի և Պարսից ծոցի մաքսատները,—ստացված եկամուտներով պիտի ծածկվեն այն պարտքերն ու նրանց տոկոսիքները, որ Շահի կառավարութիւնը վերցրել է Ռուսաստանից։ Իսկ Ֆարսիստանի և Պարսից ծոցի մաքսատների եկամուտները, ինչպէս և Կասպից ծովի պարսկական ափերում ձկնորսութիւնից ստացված եկամուտները պիտի գնան Անգլիայից վերցրած պարտքերը ծածկելուն. և 5) այն դէպքում, երբ Պարսից կառավարութիւնը չի կարողանայ կանոնաւոր կերպով վճարել իր պարտքերը Ռուսաստանին կամ Անգլիային, սրանք կատարեալ իրաւունք ունեն, իւրաքանչիւրը իրան վերաբերեալ սահմանների մէջ, կօնտրօլ նշանակել այդ պարտքերը ապահովող եկամտային աղբիւրների վրա։ Այս դէպքում էլ նորից երկու մեծ պետութիւնները պէտք է նախօրօք միմեանց հետ խորհրդակցեն ու համաձայնութեան գան, որպէսզի, թիւրիմացութիւններ չառաջանալու համար, երկուսն էլ միաժամանակ նշանակեն իրանց կօնտրօլը։

Ահա սրանք են անգլօ-ռուսական վերջին պայմանագրի Պարսկաստանին վերաբերող բոլոր կէտերը։

Եւ սա, ի հարկէ, դիպլոմատիական լեզուով բոլորովին չէ նշանակում Պարսկաստանը նուաճել։ Ընդհակառակը, ամբողջ բուրժուազական Եւրոպան ծափահարութեամբ ողջունեց երկու մեծ պետութիւնների խաղաղասիրական ձգտումները, որ նրանք յօժարակամ կերպով հրաժարվեցին Պարսկաստանի վրա արշաւանքներ գործել, արիւնահեղ պատերազմների առիթ տալ ու Պարսկաստանի նման մի թոյլ երկիր պատառ-պատառ անել։ «Պարսկաստանի ապագան, նրա անկախութիւնը և անձեռնմխելիութիւնը ապահովված է այսուհետև,—մըտածում ու ասում են միամիտ մարդիկ,— անգլօ-ռուսական վերջին համաձայնութեամբ այլ ևս վերանում է նրան երկու մասի բաժանելու և անկախութիւնից զրկելու վախը, որ մինչև օրս դամօկլեան սրի պէս կախված էր այդ երկրի գլխին»։

Սակայն, բանն էլ հէնց նրանումն է, որ, եթէ ընթերցողը փոքր ի շատէ ուշադրութեամբ վերաբերվէ վերոգրեալ պայմանագրի 5 կէտերին, նա անշուշտ կը հասկանայ, որ այդ պայմանագրի կնքվելը հէնց այն վախի իրագործումն է նշանակում, որի մասին այնչափ մտածում էին Պարսկաստանի ապագայի մասին սրտացաւ մարդիկ։

Ճիշտ է, այո, Պարսկաստանը մասերի բաժանված ու նուաճված չէ այն ձևով ու իմաստով, ինչպէս որ սովորաբար ընդունված է հասկանալ, բայց երբ մի որ և է երկիր կամ նրա մի մասը այս կամ այն մեծ պետութեան «ազդեցութեան շրջանի» մէջ է առնվում, դա իրապէս նոյն նուաճումն է, ինչպէս և առաջինը, նոյն իսկ աւելի վատթարը, քան առաջինը։

Պէտք է ասել, որ յետամնաց ու թոյլ երկիրները «ազդեցութեան շրջանի» մէջ առնելով նուաճելու սիստեմը շատ հին չէ. դա բուրժուազիայի հնարագիտութիւններից մէկն է։ Ո՞վ չը գիտէ, որ հին ժամանակներում այս կամ այն պետութիւնը կամ երկիրը կառավարելն ու նրա քաղաքական անկախութիւնը պահպանելը շատ աւելի հեշտ էր ու հազարապատիկ աւելի էժան էր նստում, քան ներկայ ժամանակներում։ Բուրժուազիայի ու կապիտալիզմի զարգանալով զարգացաւ ու բարդացաւ և պետութեան վարչական մեխանիզմը։ Տիրող վարչական ձևերը պահպանելու համար միայն հարիւրաւոր միլիօններ են ծախսվում զօրքի վրա, չը հաշւելով պետութեան դատաստանական, ուսումնական ու այլ անհրաժեշտ ճիւղերը, որոնք նոյնպէս ահագին գումարներ են կլանում։

Պարզ է, որ նուաճված երկիրը կառավարելու, նրան բարեկարգ վիճակի մէջ դնելու ամբողջ հոգսը նուաճողի վրա է ընկնում։ Եւ որչափ յետամնաց է նուաճված երկիրը կուլտուրապէս ու քաղաքականապէս, այնչափ էլ աւելի մեծ ծախսեր են պահանջվում նրան կառավարելու ու բարեկարգելու համար, և այնչափ մեծ են այդ ծախսերը, որ նուաճված երկրի ժողովրդից հաւաքած տուրքերն ու հարկերը բոլորովին չեն բաւականացնում նրանց ծածկելու համար, ուստի և նուաճող պետութիւնը պարտաւորված է լինում շարունակ իր մայր գանձարանից լրացնել անհրաժեշտ ծախսերի պակասորդը։

Այսպիսով, ինչպէս տեսնում ենք, հին ժամանակներում այնչափ սիրված նուաճողական քաղաքականութիւնը շահադիտական տեսակէտով քաղաքակրթութեան արդի հանգամանքների ու պայմանների մէջ բոլորովին ձեռնտու մի բան չէ։ Իսկ ո՞վ չը գիտէ, որ ներկայումս ամենուրեք իր տիրապետութիւնը հաստատած բուրժուազիան ամեն բանի մէջ խիստ մանրակրկիտ հաշիւներով է ղեկավարվում։ Նա երբեք չէ համաձայնում իր կապիտալները ծախսել այնտեղ, որտեղից նա անկարող պիտի լինի անմիջական շահ ստանալ։

Ահա հէնց այս հանգամանքի շնորհով արդի բուրժուազական պետութիւնները հնարել են երկիրներ նուաճելու այն նորագոյն ձևը, որը այս կամ այն յետամնաց երկիրը «ազդեցութեան շրջանի» մէջ առնել է կոչվում և որը, առանց մի որ և է ծախս պատճառելու, փառաւորապէս շահագործութեան վայր է դարձնում այդ եղանակով նուաճված երկիրը։ Այս նորագոյն սիստեմով նուաճող պետութիւնը ոչ մի պարտաւորութիւն չունի նուաճված երկրի ներքին վարչական ու կուլտուրական գործերի վրա որ և է հոգ տանելու, ծախսեր անելու։ Նա միայն մտածում է իր մայր երկրում արտադրված արդիւնագործական ապրանքները վաճառելու և մանաւանդ իր աւելորդ կապիտալները շահաւէտ՝ լաւ տոկոսներ բերող ձեռնարկութիւնների մէջ դնելու մասին։ Իսկ դրա համար ամենաառաջին պայմանը մօնօպօլիան է համարվում, այսինքն որ այս-ինչ երկրում, կամ երկրի այս-ինչ մասում զանազան արդիւնագործական, առևտրական ու այլ բոլոր շահագործական ձեռնարկութիւններ սկսելու իրաւունքը այս կամ այն մեծ պետութեան մենաշնորհն է դառնում։

Եւ որովհետև այդ սկսված արդիւնագործական ձեռնարկութիւնները հետզհետէ նոր ու նոր կուլտուրական, քաղաքական ու սօցիալական պահանջներ են առաջացնում շահագործվող վայրում, պահանջներ, որոնց կարելի է գոհացում տալ միմիայն դրամով, իսկ որովհետև այդ երկրի կառավարութիւնը միշտ զուրկ է լինում անհրաժեշտ դրամից, ուստի և նա ստիպված է լինում շարունակաբար նոր ու նոր փոխառութիւններ անել հէնց իրան շահագործող պետութիւններից։ Իսկ այդ հանգամանքը աւելի ու աւելի է մեծացնում այս վերջինների ազդեցութիւնը և աւելի մեծ իրաւունքներ տալիս նրանց իրանց պարտատիրոջը շահագործելու, կեղեքելու ու նրան իրանց կատարեալ վասսալը դարձնելու։

Ահա հէնց այդպիսի վասսալական դրութիւն սահմանելու դատավճիռ է նշանակում վերջին անգլօ-ռուսական «համաձայնութիւնը» Պարսկաստանի համար, որ այդ երկու մեծ պետութիւնները, իբրև հիւանդ մարդի երկու ժառանգներ, շտապեցին կնքել այնպիսի մի ժամանակ, երբ հիւանդ Պարսկաստանը ճիգեր է թափում վերակենդանանալու և ինքնուրոյն կեանք վարելու համար:

Ռ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլօ-ռուսական համաձայնութիւնը.—«Standard»-ի ասելով, պէտք է նա նկատելի ազդեցութիւն թողնի միջազգային քաղաքականութեան վրա: Նշաններ կան, որ այդ ազդեցութիւնը երևան է գալիս այժմեան ամենասուր հարցում—Մարօքի երկրի դրութեան խնդրում: Ֆրանսիայի միջամտութիւնը, որ մինչև օրս անբաւականացուցիչ էր, խոստանում է եռանդուն և բուռն լինել, շնորհիւ այն միջոցների, որ ֆրանսիական կառավարութիւնը կարող է ձեռք առնել, միայն շնորհիւ այն հանգամանքի, որ անգլօ-ռուսական համաձայնութիւնը ամրացուցիչ ազդեցութիւն ունի Եւրօպայի դրութեան վրա: Բացի Ֆրանսիային աջակցելուց Մարօքում, անգլօ-ռուսական համաձայնութիւնը, «Standard»-ի կարծիքով, նոր կեանք և նոր ույժ կը մտցնէ երկպետեան դաշնակցութեան մէջ, որովհետև Ռուսաստանի համար անգլիական շուկայի բացմամբ՝ նրա ֆինանսական դժուարութիւնները կարող են պակասել, և քիչ զբաղված լինելով Ասիայում, նա վերստին կարող կը լինի օգտուել Եւրօպայում ունեցած իր ազդեցութեան ամբողջ ույժից, իսկ սրա շնորհիւ՝ ռուսական արժեթղթերի ֆրանսիացի տէրերը աւելի մեծ ապահովութիւն կը ստանան, և ֆրանսիական պետական գործիչները մեծ հաւասարութիւն ձեռք կը բերեն: Իսկ Ֆրանսիան, «Standard»-ի կարծիքով, մեծ կարիք ունի հաւասարակշռի: Այս հաւասար երկիրը, եթէ բոլորովին չը խորտակվեց, 1870 թ. աղէտով և ոչ մի կերպ լիակատար ձևով չը վերակենդանացաւ Ռուսաստանի հետ դաշն կապելուց յետոյ:

«Բայց այժմ, երբ երկպետեան դաշնադրութիւնը ամրապնդված է Ֆրանսիայի և Անգլիայի հետ կնքած համաձայնութեամբ, և երկուսն էլ միասին ուժեղացած են անգլօ-ռուսական դաշնադրութեամբ, Ֆրանսիայի ձայնը պէտք է նորօրինակ հզօր լինի միջազգային խորհուրդներում, ինչպէս եղել է նա շարունակ: Այս արդարացի է և անհրաժեշտ, անհրաժեշտ՝ եւրօպական հաւասարակշռութիւնը պահպանելու համար»:

Լրագիրը ապա մատնանշում է, որ Պարսկաստանը ամեն րոպէ կարող է երկրորդ Մարօքի փոխուել և նրա գործերի մէջ խառնուելը անհրաժեշտ լինել: Եթէ այդ րոպէն նախքան անգլօ-ռուսական համաձայնութեան կնքելը հասնէր, «հետևանքները, —ասում է լրագիրը, — կարող էին լուրջ լինել ոչ միայն Պարսկաստանի, այլ, թերևս, և համայն խաղաղութեան համար»:

Շարունակելով խօսել ապա գերմանացիների մասին, լրագիրը գտնում է, որ Անգլիայում դէպի Գերմանիան թշնամութիւն գոյութիւն չունի, սակայն մի փոքր անհանգստութիւն է նկատվում պանգերմանական նպատակների և պահանջողութիւնների պատճառով: «Ուրեմն, — ասում է «Standard»-ը, —եթէ անգլօ-ռուսական համաձայնութիւնը կանգնեցնում է գերմանական շովինիզմը, այդ համաձայնութեան ընդհանուր ողջոյնի համար Գերմանիայումն էլ պակաս հիմքեր չը կան, ինչպէս արտասահմանում»:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Ներքին

19 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Նարվսկի կտաւ գործարանի վերատեսուչ Նեյցերի սպանութեան մէջ կասկածվող ութ բանուորին զինուորական դատարանը դատապարտեց կախաղանի:

ԳՐՕԴՆՕ: Բունդի ռազմիկ խումբը Ֆրանկ վաճառականից պահանջեց 500 րուբլի. նա մերժեց: Սեպտ. 18-ին նրա դէմ մահափորձ կատարվեց: Կրակողը ձերբակալվեց բրաունինգը ձեռքին:

20 սեպտեմբերի

ՄՕՍԿՎԱ: Համազեմստվային կազմակերպութիւնը Չէրնիգովի նահանգի համար փոխադրեց 150,000 ր:

Արտաքին

19 սեպտեմբերի

ՎԻԵՆՆԱ: Բալկանեան գործերին վերաբերող տեղեկութիւնը ամենալաւ տպաւորութիւն գործեց և լիակատար հաւանութեան գտաւ ամբողջ մամուլի կողմից:

Երեկոյեան, Ֆրանց Յօվսէփի սարքած ճաշից յետոյ, Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչը և Մեծ Իշխանուհի Մարիա Պավլովնան մեկնեցին Վենետիկ: Ֆրանց Յօվսէփը բարձրաստիճան հիւրերին ճանապարհ դրեց կայարանում:

ՓԱՐԻԶ: Հանրապետութեան նախագահ Ֆալյէրը այցելեց Ջրհեղեղից փչացած տեղերը:

ՊԷՅՍԼԻ (Շոտլանդիա): Թել պատրաստող գործարանում գործադուլ արին 400 բանուորուհիներ: Ոստիկանութիւնը դժուարութեամբ կարգը վերականգնեց: Վարչութիւնը փակեց գործարանը, ուր աշխատում էին 5000 բանւորներ:

ԼՈՆԴՈՆ: «Թայմսին» հեռագրում են Տօկիոյից, որ Կորէայի ապստամբութիւնը բոլորովին ճնշված է: Ապստամբները ունեցել են կորուստ՝ 800 սպանվածներ և մի քանի հազար վիրաւորներ: Ապստամբութիւնը ճնշող ճապօնական զօրքերի կորուստն է 15 սպանվածներ և 40 վիրաւորներ:

20 սեպտեմբերի

ՀԱԱԳԱ: Գերմանական կայսերական զոյգը մտադիր է նոյեմբերին այցելել Թագուհի Վիլհէլմինային:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ

ԲԱԳՈՒ (Գանձակ, Եւլախ)

Արագ—առաւ. 6 ժ. 58 ր., Գանձակ—առ. 11 ժ. 44 ր., Եւլախ—ցեր. 1 ժ. 18 ր., Բագու—երեկ. 8 ժ. 3 ր.: Պօստ.—երեկ. 8 ժ. 34 ր., Գանձակ—գիշ. 2 ժ. 55 ր., Եւլախ—առ. 5 ժ. 3 ր., Բագու—ցեր. 2 ժ. 21 ր.: Մարդատար—առ. 9 ժ. 3 ր., Գանձակ—ցեր. 3 ժ. 20 ր., Եւլախ—ցեր. 5 ժ. 23 ր., Բագու—գիշ. 1 ժ. 53 ր.:

ԲԱԹՈՒՄ (Փօթի, Միխայլօվօ, Ռիօն):

Արագ—երեկ. 11 ժ. 58 ր., Փօթի—գիշ. 1 ժ. 52 ր., Միխայլօվօ—գիշ. 2 ժ. 56 ր., Ռիօն—առ. 6 ժ. 42 ր., Բաթում—առ. 10 ժ. 17 ր., պօստ.—ցեր. 1. ժ. 21 ր., Փօթի—3 ժ. 53 ր., Միխայլօվօ—ցեր. 5 ժ. 24 ր., Ռիօն—երեկ. 9 ժ. 48 ր., Բաթում—գիշ. 2 ժ. 39 ր., Մարդ.—գիշ. 1 ժ. 3 ր., Փօթի—առաւ. 3 ժ. 35 ր., Միխայլօվօ—առ. 5 ժ. 17 ր., Ռիօն—առ. 9 ժ. 40 ր., Բաթում—ցեր. 2 ժ. 21 ր.:

ԲՈՐԺՕՄ—ցեր. 3 ժ. 8 ր., առ 9 ժ. 48 ր.:

ԵՐԵՒԱՆ (Ալէքսանդրօպօլ):

Պօստ.—գիշ. 1 ժ. 8 ր., Ալէքսանդրօպօլ—ցեր. 11 ժ. 51 ր., Երևան—երեկ. 7 ժ. 21 ր.: Մարդ.-ապր.—ցեր. 1 ժ. 43 ր., Ալէքսանդրօպօլ—երեկ. 12 ժ. 45 ր., Երևան—գիշ. 6 ր. 51 ր.:

ԹԻՖԼԻՍ

ԲԱԳՈՒԻՑ—արագ.—երեկ. 11 ժ. 33 ր., պօստ.—ցեր. 12 ժ. 31 ր.: Մարդատար—երեկ. 12 ժ. 33 ր.:

ԲԱԹՈՒՄԻՑ—արագ—գիշ. 6 ժ. 38 ր., պօստ.—երեկ. 7 ժ. 43 ր., մարդ.—առ. 8 ժ. 23 ր.:

ԲՈՐԺՕՄԻՑ—գիշ. 6 ժ. 8 ր., ցեր. 10 ժ. 2 ր.:

ԵՐԵՒԱՆԻՑ—պօստ. գիշ. 5 ժ. 58 ր., Մարդ.-ապրանք.—ցեր. 5 ժ. 13 ր.:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս), միզային հ.:

Կ. Մ. ՋԻՆՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:

Զ. Ի. ԲԱՐԱՆԱՄԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.:

Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի:

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.:

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—$1^1/_2$—2 ժ. մանկաբարձութեան:

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նախասարդեան

Լոյս են տեսել
ԱՐՇԱԿ ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆԻ
Փոխադրութեամբ
ՄՕՍԿՎԱՅԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԸ փոխադրած և յարմարեցրած հայոց դպրոցների ծրագրներին:

1) «Թուաբանական խնդիրներ և օրինակներ», առաջին տարվայ դասընթաց, առանձին գրքոյկով, գինն է . . 12 կ.

2) «Թուաբանական խնդիրներ և օրինակներ», պրակ Ա., առաջին և երկրորդ տարվայ դասընթաց միասին. Բ. տպագր., գ. 30 կ.

3) «Թուաբանական խնդիրներ և օրինակներ», պրակ Բ., երրորդ տարվայ դասընթաց, Բ. տպագրութիւն, գինն է . 30 կ.

4) «Թուաբանական խնդիրներ և օրինակներ», պրակ Գ., չորրորդ տարվայ (I դասարանի) դասընթաց, Բ. տպ., գինն է 30 կ.

5) «Թուաբանական խնդիրներ և օրինակներ», պրակ Դ., կոտորակներ, հինգերորդ տարվայ (II դասարանի) դասընթաց, կոտորակների վերաբերեալ կանոնները և խնդիրները օրինակելի ձևով լուծելու բացատրութիւններով (ըստ Շապօշնիկովի և Վալցովի), գ. 40 կ.:

6) «Ձեռնարկ Թուաբանութեան» (ըստ Կիսիլովի), գինն է . . 50 կ.

7) (Մամուլի տակ է) «Թուաբանական խնդիրներ և օրինակներ», պրակ Ե., համեմատութիւններ և Երից կանոնները (ըստ Շապօշնիկովի և Վալցովի):

ԳՈՒՄԱՐՈՎ ԳՆՈՂՆԵՐԻՆ ԲԱՒԱՐԱՐ ԶԵՂՋ

Դիմել՝ Тифлисъ, Абасъ-Абадская площадь Аршаку Спарапетянцу կամ «Գուտտենբերգ» և միւս գրախանութներին:
4—5

Մի քանի տարի ուսուցչութիւն արած և Ներսիսեան VII-րդ մանկավարժական կուրսը աւարտած ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ պատրաստում է երկսեռ աշակերտներ միջնակարգ դպրոցի համար բոլոր առարկաներից, բացի ռուսաց լեզուից:
Դիմել. Еврейскій II тупикъ, Арсену Ацакорціану. 1—3

Հարկաւոր է
ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ
2 երեխաների հետ պարապելու համար Թիֆլիսից դուրս: Հասցէն իմանալ «Մշակի» խմբագրատանը: 1—2

ԵՐԴՈՒԵԱԼ-ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ
ՅՈՎՍԷՓ ՂՈՐՂԱՆԵԱՆ
տեղափոխվեց Կլասսիչեսկայա փողոց, տուն № 6 (առաջին արական գիմնազիայի ետևը):
(ու. կ. հ.) 1—3

ԳՐԱՄՄՕՖՕՆ
ՁՐԻ 60 ՕՐ

Եթէ այդ ժամանակամիջոցում գրամմօֆօնը կերևայ վատ, ֆիրման փողը վերադարձնում է: Պահանջեցէք և կը համոզվէք: Ընդամենը 28 ր. 50 կ.: Ուղարկում ենք գեղեցիկ և դիմացկուն գրամմօֆօն «Տօնարմ», հռչակաւոր «Կօնցերտ» մարկայի նորագոյն կօնստրուկցիայի, եր առանցքի շուրջը պտտող ձայնատարով: Այդ գրամմօֆօնի հետ ուղարկում ենք 6 հատ մեծ՝ $25^1/_2$ սանտիմ ունեցող երկերեսանի պլաստինկաներ և 60 կօնցերտային ասեղներ: Նուագելու ժամանակ ձայնատարը կարելի է շարժել դէպի զանազան կողմեր՝ չազդելով ձայնաւորութեան վրա: Գրամմօֆօններ հռչակաւոր «Պիֆ-Պաֆ» մարկայի կօնցերտային մեմբրանով. գինը 15 րուբլի: Ձրիապէս ուղարկվում են 4 պլաստինկաներ և 400 կօնցերտային ասեղներ: Ահագին քանակութեամբ երկերեսանի պլաստինկաներ 1 ր. և 2 ր.: Պատուէրները կատարվում են բարեխղճօրէն և անմիջապէս, վերադիր վճարով, ստանալով ապսպրած (заказное) նամակով 1 րուբլի գրաւական: Խնդրում եմ հասցէագրել՝ Т-во „Индѣецъ", Варшава, 1-ая почт. к-ра, ящикъ № 30.

Ուրիշ ֆիրմայի կողմից յայտարարված գրամմօֆօնները մեր ֆիրման ուղարկում է 15% էժան:

Պատուէր ուղարկելու ժամանակ խնդրում ենք ներփակել 1 րուբլի գրաւական և լրագրից կտրված յայտարարութիւնը: Թղթակցութիւնը ռուսերէն կամ գերմաներէն լեզուներով: (Ե. ու.) 1—5

„ՓԱՐՈՍ" ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ
(Նիկ. Մատինեանի, Երևանեան հր., Թիֆլիս)
ԾԱԽՎՈՒՄ ԵՆ ԶԱՆԱԶԱՆ
ԴԱՍԱԳՐՔԵՐ
հայ և օտար լեզուներով:
Ստացված են ՆՈՐ ԳՐՔԵՐ

«Յառաջ» գրադ. № 45. Է. Վանդերվելդ. «Բանուոր դասակ. դրութիւնը Բելգիայում», գ. 45 կ.
№ 46. Ս. Զակ. «Հող և Կապիտալիզմ», գ. 15 կ.
Հրատ. «Զանգ» № 1. «Տնտեսական գիտութեան համառօտ դասընթաց», 367 երես, գ. 1 ր.
Հրատ. Ֆար-Հատ. և ընկ. «Արիւնի երգը», 174 եր., գ. 50 կ.:
«Լուսաբեր» ա. տարի.—«Այբբենարան և առաջին ընթերցարան» կազմեցին Ստ. Լիսիցեան, Յովհ. Թումանեան և Լ. Շանթ. գ. 30 կոպ.
Ստ. Լիսիցեան.—«Հայրենի առասպելներից և վէպերից» (պատմուածքներ հայոց պատմութիւնից), գ. 35 կոպ.

Վերջին երկու գրքերի պահեստը գտնվում է «ՓԱՐՈՍ» գրախանութում:

«Յառաջ»-ի ամբողջ գրադարանը բաղկացած 45 գրքից—5 ր. 84 կ. արժողութեամբ, ուղարկվում է ցանկացողին առանց ճանապարհածախսի: Գումարով գնողներին զիջումն է լինում:

Պատուէրները կատարվում են անյապաղ և ոչ առանց կանխավճարի:
(ու. կ. չ.) 3—5

ՎԱՌ. ԵՒ ՍՏ.
ՍՄԲԱՏԵԱՆՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

Ռօստովից Դ/վ. փոխադրվում է Թիֆլիս: Նպատակն է երաշխաւորութեամբ պատրաստել հայ երկսեռ երեխաներ ցանկացած միջնակարգ դպրոցը մտնելու և հիմնօրէն սովորեցնել մայրենի լեզուն: Կայ երկու գիշերօթիկի տեղ: Պայմանների մասին ամեն օր, Բէհբութեան փ., տ. Սմբ. Զանփոլադեանի № 60: 4—10

Լոյս են տեսել
ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս.-Ի
ԵՐԵՔ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ
ԵՐԵՔ ՈՍԿՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
գիրքը, ընտիր թղթի վրա, գինը 25 կոպ.
և
X ՀԱՐՈՒՍՏԸ ՄԱՀԱՑԻ ԾԱԿՈՒՄ
գրքոյկը, 64 էջ, գինը 15 կոպ.
Հարցնել՝ Կենտր., Գուտտ. և Փարոս գրախանութներում, ուր վաճառվում են նոյնպէս միւս 15 գրքերը:
3—10

ԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆՑԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Միքայէլեանսկի պրոսպ. № 24/4).

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն: Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ: Առարկաներն են. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմանակ. ֆրան., ամերիկական, բանկային և գործարանական. 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական Թղթակցութիւն, 6) Թուաբանութիւն համրիչի վրա, 7) Վայելչագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղել): Առարկաներն ուսուցանվում են Արևմտ. Եւրօպայի առևտրական ակադեմիաների ծրագրով: Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.:

Գրելու մեքենայի վրա գրելու դասեր:
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ

Զբաղմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին: Խնդիրների ընդունելութիւնն ամեն օր ժ. 10—12 և 4—7:
Համառօտ ծրագիրը և կանոնները ձրիաբար տրվում և ուղարկվում են կուրսերից:
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութիւնների կանդիդատ
Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ա. օ.) 8—10

Թիֆլիսի Վանաց Մայր եկեղեցու կրօնա-պատմական թանգարանի մնայուն յանձնաժողովը

Յայտարարում է, որ 1908 թ. ապրիլի 7-ին պէտք է տեղի ունենայ Ղուկասեան մրցանակաբաշխութիւնը:

Մրցութեան մասնակցել ցանկացողները պէտք է իրանց աշխատութիւններն ուղարկեն մինչև առաջիկայ դեկտեմբերի 15-ը Թիֆլիսի առաջնորդարան՝ մնայուն Յանձնաժողովի անունով:

Ղուկասեան մրցանակի նիւթը «պէտք է պատկանի հայ լեզուի, հայ դպրութեան կամ հայ պատմութեան ճիւղերին, այն է՝ հայոց լեզուի և գրականութեան հետազօտութիւն, հին հայ մատենագիրների թարգմանութիւն լուսաբանութիւններով կամ բանասիրական քննադատութիւններով ճոխացրած, ազգային կամ եկեղեցական պատմութեան լուսաբանված հատուածներ, հայրենակ գաւառների աշխարհագրական տեղագրութիւն, ազգային գեղարուեստի հետազօտութիւն, հայ օրէնսդրութեան կամ կանոնադրութեան վերաբերեալ տեսութիւններ»:

«Մրցանակին չեն կարող ներկայացվել 1) օտար լեզուներից թարգմանութիւններ, 2) դասագրքեր, 3) մի անգամ արդէն որևէ ազգային հաստատութիւնից վարձատրված երկեր, 4) հին մատենագրութեանց պարզ տպագրութիւններ, 5) մրցման ժամանակից երկու տարի առաջ տպագրված գործեր»:

Ներկայացված գործերը պէտք է հայերէն լինեն, ձեռագիր կամ տպված. տպագիրները հնգական, իսկ ձեռագիրները մէկ օրինակ:

Մրցանակ արժանացած աշխատութեանը ՀԵՂԻՆԱԿԻՆ ՏՐՎՈՒՄ Է ՀԻՆԳՀԱՐԻՒՐ ՌՈՒԲԼԻ:

Առաջնորդ Թեմի և Նախագահ Մնայուն Յանձնաժողովի՝ Գարեգին Արքեպիսկոպոս
Անդամ Մնայուն Յանձնաժողովի և քարտուղար՝ Իսահակ Յարութիւնեան
2—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը: Կուկիա, Սեմեօնովսկի փողոց, № 16:
(ու. կ. ե.) 7—30

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտարարում է, որ ընկ. էժանագին ճաշարանում ճաշ է տրվում չքաւոր աշակերտներին ամսական 3 րուբլի 60 կոպէկով: Հասցէն՝ Абасъ-Абадская площ. № 7. 3—4

Լոյս տեսաւ և վաճառվում է
Գ. Ի. ԻՎԱՆՕՎ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ
Կովկասի համառօտ աշխարհագրութեամբ
Առաջին գիրք, բնական մաս: Չորրորդ և մասամբ երրորդ տարվայ ուսման նիւթ:
Փոխադրեց Արտաշէս Աբեղեան
Յաւելումներ Կրուբերի դասագրքից և փոխադրողի կողմից: Յաւելուած՝ Աշխարհագրական զրոյցներ: Բազմաթիւ (իննսուն և հինգ) նկարներով. կլիշէները պատրաստել են տրված Պետերբուրգում:
ԳԻՆՆ 70 ԿՈՊԷԿ
Դիմել՝ «Գուտտենբերգ» գրախանութին. Փոխադրողի հասցէն՝ Ներսիսեան դպրոց:
(օ. մ.) 3—4

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

Վերայում, «Սալխինօյի» և մօլօկանների Թաղի մէջ տեղում, Մակարօվների սեփականութիւն կազմող հողերը, որոնք շատ յարմարագոյն են շինութիւնների համար: Նոյնպէս և՝ «Սաբուրթալօյում», Խճուղու ճանապարհին կից, Մուշտայիդի դիմաց: Հողաբաժինների տարածութիւնն է 100-ից մինչև 120 քառ. սաժէն: Արժէքի վճարը լինելու է ամսէ-ամիս, 6 ամսվայ ժամանակով, սկսած սեպտեմբերի 1-ից: Արժէքի ընդհանուր գումարը վճարելուց յետոյ գնողները կատարեալ իրաւունք են համարում իրանց հողաբաժինները օրինական ճանապարհով հաստատել տալու իրանց վրա՝ ստանալով կուպչիանները: Ցանկացողները դիմում են. «Ախալցխէն» գրասենեակը, Դվօրցօվայա փողոց, վրաց ազնուականների տուն, և Ալէքսանդր Գաբայեվի գրասենեակը, Վերայի փայտի հրապարակում, ուր առաջ քաղաքային մսավաճառանոցն էր: Յիշված տեղերում կարելի է տեղեկանալ վաճառվող հողերի քառակուսի սաժէնների արժէքի մասին՝ իւրաքանչիւր հողաբաժիններինը առանձին-առանձին:

Կոմմիսիայի անդամներ՝
Սեվաստի Գանչեչիլաձէ
Բագրատ Թորոսեանց
Իսակ Բախտաձէ
(օ. մ.) 2—10

Մայրենի լեզու, առաջին տարի, նոր տիպ, բազմաթիւ նոր պատկերներ, գրութեան օրինակները տպագրին զուգընթաց. ու. իւ. յ տառերի համար նոր նշանագրեր, որոնք փարատում են այդ տառերի պատճառած բոլոր դժուարութիւնները և գրքի վերջում փոխարինվում են իրանց սովորական ձևերով:—Գինը 20 կ., գումարով 13 կ.:

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, երկրորդ տարի, նոր տիպ, գինը 30 կոպ., գումարով 20 կ.:

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, երրորդ տարի, նոր տիպ, բարեփոխած և լրացրած. հայկական բաժինը խմբագրած է նորից, հայի առտնին կեանք, սովորութիւններ, աւանդութիւններ, գիւղական կեանք. գինը 50 կոպ., գումարով 33 կոպէկ:

Միւս գրքերի գները և վաճառման պայմանները նոյնն են մնում: Գլխաւոր պահեստը Կենտրոնական գրավաճառանոցում:

Նիկողայոս Տէր-Ղևոնդեան
4—5

Մի ինտելլիգենտ ընտանիք
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է
ՆԱԽԼԷԲՆԻԿՆԵՐ
կարելի է դասերի կրկնողութեամբ: Պատրաստում է աշակերտներին բոլոր միջնակարգ դպրոցների մինչև 4-րդ դաս.:
Հասցէն իմանալ «Մշակի» խմբագրատանը Ս. Եսայեանից կամ Уголъ Екатерининской и Панасевича № 3 Есаянъ, Կոմմերչեսկի ուսումնարանին կից:
(ա. օ.) 5—5

«Կորչեն ադամանդները»

Ոսկէ մասսիվ մատանի 56 պր. անգլիական ձևի պարիզեան ադամանդով, ամուր շինած, գինը 2 ր. 75 կ., 2 հատը 5 ր. ոսկէ օղեր 1 Պարիզի ադամանդով, կորչելուց պահպանող արտօնագրած փակիչով. գինը 1 զոյգի 3 ր. 75 կ., ոսկէ «ՄԱՐԿԻԶ» մատանի, պարիզեան ադամանդներով զրուագած՝ գինն է 4 ր. և 8 ր.: Նշանդրէքի մասսիվ մատանի. գինն է 1 հատի 3 ր. 75 կ., 2 հատի—7 րուբ.: Շքեղ ոսկէ գարնիտուր 56 պր. մէկ արկղում, որի մէջ կայ՝ բրօշկա, մատանի և 1 զոյգ օղեր, գինը 8 ր. 50 կ.: Ուղարկվում են վերադիր վճարով. գրաւական չի պահանջվում: Ուղարկելը պատուէր տուողի հաշուով:

Հասցէն՝ Т-ва „Индѣецъ". Варшава, 1-ая почт. к-ра, ящикъ № 30. Թղթակցութիւնը ռուսերէն կամ գերմաներէն լեզուներով:
5—5

ՋՈՒԹԱԿԻ ԴԱՍԵՐ
Մ. Տ. ՎԱՍԻԼԻԵՎԻ
Տարեկան վճարը 90 րուբլի
Գրիբօեդօվսկայա № 5.
Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 10—1 և երեկոյեան $4^1/_2$—$7^1/_2$ ժամերին: 2—3

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мугдусіакоповъ съ С-ми
Большая Ванкская ул. д. Семинаріи № 3.